

891.99

m-27

13 MAY 20

1000 1000000

WORLD RECORDS




WORLD RECORDS

1000 1000000

WORLD RECORDS

WORLD RECORDS



WORLD RECORDS

1000 1000000

2076ա.

323

105

19 NOV 2018

ԼԵՒՈՆ ԽԱՆՁԱԴԷ

891.99

Խ-24

Կար

ՆԵՐՍԷԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ



(Թուուցիկ յիսուարիւններ Եօրջայի աւիւնս աւցեալից).

1001
1914

Հրատարակութիւն

ՍԱՐԳԻՍ ՆԵՐՍԷՍԵԱՆԻ



ՎԱՂԱՐԵԱՊԱՏ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՈՈՅ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ

1907

I.



Ռեա ոչ մի անգամ ճանապարհորդութիւնը
այնքան ոգելից, այնքան հմայիչ կացութիւն չէր ստեղ-
ծել ինչ համար, որքան իմ այս վերջին վերադարձը
դէպի իմ հայրենի ծննդավայրը: Երկու օր էր, ինչ
մենք անընդհատ դալիս ու գալիս էինք. սակայն ոչ
մի յոգնածութիւն, ոչ մի հոգեկան թմրութիւն չէին
զգում իմ ոչ այնքան առողջ նետրոնները: Ընդհա-
կառակը, հոգիս ասես ամեն ժամ, ամեն րոպէ ձըգ-
տում էր սաւառնել դէպի վերը, դէպի անհունը, ուր
երևակայական սրաթուիչ հովանու ներքոյ կեանքը
հեռւում էր իր երփներանգ գոյներով, իր հաղար ու մի
սքանչելի քաղցրութիւններով, և ես ասացի միշտ
կանգուն ոգևորութեամբ լողում էի երազանքների
այդ բիւրեղացած աշխարհում և որքան առաջ էի
ընթանում, այնքան ինքնամոռացութիւնը իր մնջիկ
թևերով կապում, կաշկանդում էր ողջ հութիւնս
..... Աւաղ, քսնի տարի է, երբ ես ստիպուած
կեանքի դառնագին և հոգեմաշ հարուածներից և
նոյնանման ձախորդ հանգամանքներից տուեցի իմ
վերջին հրաժեշտը իմ այն նուիրական հող ու ջրին
և հեռացայ, ինքս էլ ուշքի չառնելով թէ՛ ինչո՞ւ եմ
այդպէս վարւում: Եւ անողոք կեանքիս աստանդա-

կան նաւակը երկւր-երկւր տարուբերւելով այս ու այն անհիւրընկալ վայրերում վերջապէս միայն այսօր փոխեց իր զեկը դէպի իմ պաշտելի ծննդավայրը:

Եւ ես դալիս էի

Գալիս էի, բայց արդէն սեւահոգի ճակատագիրս այնպիսի դառն, այնպիսի սթափեցուցիչ դասեր էր տուել ինձ, որ ես հոգեպէս զգում էի, թէ երկար չպիտի կարողանամ դարձեալ հանգիստ առնել իմ այդ անուշիկ հող ու ջրում: Իմ այդ բացակայութեանս միջոցին նա, այդ դաժան, այդ աներես բաղդս մի շարք նուիրական գերեզմաններ էր պատրաստել ինձ համար: Գալիս էի և մերթ ընդ մերթ ինձ ու ինձ հարց էի տալիս. «Մի՞թէ իրօք նրանք չկան այլևս. մի՞թէ այլևս իմ նազելի, իմ անգին մայրիկը սրտի անհուն բերկրութեամբ լցուած՝ լեղապատառ եղածի նման չպիտի դուրս թռչէր և «բալայ ջան, աղիգ ջան», ճչալով, չպիտի փարւէր իմ պարանոցովը: Մի՞թէ իմ միշտ մելամաղձոտ, միշտ մռայլերես հայրիկը, համաչափ չրխկացնելով իր տէրոգորմեան, չպիտի այլևս բաց անէր իր արձակ ճակատի թախճոտ կնճիռները և համբուրելով ինձ չասէր. «Լաւ ես, լաւ, փառք Աստուծոյ»: Եւ վերջապէս, մի՞թէ հարազատներիս, ընկերներիս ստուար բազմութիւնը այլևս չպիտի շրջապատէր ինձ և իրանց հարցերի հեղեղներով չողողէր ողջ էութիւնս: Թէև աննկարագրելի ծանր էին այդ ամենը ինձ համար, սակայն ցնցող իրականութիւնը իր բոլոր այդ անփոխարինելի կորուստներով մի ցուրտ սարսուռ ազդող իրականութեամբ արդէն փանդեմ էր առաջիս իր հիասթափիչ դարշելիութեամբ: Չնայած

այդ այդպէս էր, սակայն ես տակաւին չէի հաւատում ինձ և ողջ էութեամբս լսելիք դառած՝ ունկնդիր էի այն հազար ու մի փսփսուկներին, վաղեմի պատմութիւններին, անցած-գնացած սև օրերիս քաղցրախոհ յուշերիս, որոնք մի առ մի ասես լուեկան թւում էին ինձ մեր իւրաքանչիւր քար ու թուփը, որոնց ամեն մէկի հետ ես կապւած էի մի-մի նուիրական պատմութիւնով:

Այո, այդտեղ էր իմ հինաւուրց կեանքը. այդտեղ էր իմ մանկութիւնը

Ծածկուած քառաձի հանրակառքը օրօրւելով առաջ էր ընթանում և միայն կաշեայ պատերի մի բացուածքից էի ես նայում մեր դար ու դաշտին և իմ մերթ քաղցրախոհ, մերթ խռովայոյզ խոհերի գիրկը ընկնում: Ընկերներիցս մէկը մի քսան տարեկան ուսանող էր, որի խուճուճ մաղբրը և ընդհանրապէս մաղձոտ տեսքը վկայում էին, որ նա գտնւում է իր այդ հասակին յատուկ խանդավառ կացութեան մէջ: Նրա անունը Բ. էր, սակայն ընկերները կանչում էին նրան Գալի-Ղարդաշ: Միւսը՝ մի 60-ին մօտիկ ալեխառն ծերունի էր, որի դէմքի վրայից օր ու գիշեր մի վայրկեան անգամ չէին հեռանում տրտմութեան այն հովերը, որոնք նման բարձրագագաթ լեռների այն վիթխարի կատարներին, որոնց վրայ յաւէտ թառած են լինում սև-սև թուղպերի թանձր շերտեր: Մնացած ընկերներս այնքան չէին գրաւում իմ ուշ ու միտքը: Մեր ամբողջ այդ ճանապարհորդութեան ընթացքում միայն երկու անգամ էր խօսել այդ թախճոտ ծերունին, Ներսէնց Սադէն, այն

էլ երբ ես փորձեի էի դուրս բերել նրան նրա այդ հոգեկան խռով զրութիւնից: Եւ այդ ժամանակն էլ նա տալիս էր ինձ միայն կցկտուր պատասխաններ, որոնք առաւել ևս համոզում էին ինձ, որ ծերունին տանջւում է մի հոգեկան խռով վէրքերով, որոնց ժահ-րոտ պալարները թերեւս իմ կարծածիցս էլ աւելի խորն պիտի լինէին:

Վերջապէս, մենք զգալի չափով սկսեցինք մեր-ձենալ մեր ծովակին. ես թէեւ այդ չէի տեսնում, սա-կայն դեռ մանկութիւնիցս ականջներս իւրացրել էին այդ ծովակի դարդոտ և սգալից խուլ հեծեծանքը, որը թէ ասեմք քամիների և թէ՛ մեր երկրի հովա-տուն զեփիւռի հետն էլ միայն ու միայն ինձ իր դա-րաւոր վիշտն էր փսփսում: Որպէս զի տեսնել կարո-ղանամ ծովակը, ես աւելի ևս բաց արեցի կառքի կաշեայ պատը: Այժմ միայն տեսայ, որ մի քանի բոպէից յետոյ զրեթէ մեր ճանապարհը ուղղակի ծո-վակի եզերքովն պիտի ընթանայ, որի շուրջը բնու-թիւնը զարդարել էր իր ինքնուրոյն, իր գեղանի վըր-ձինով, որը երանգ-երանգ թաւիշով թւում էր ծած-կած լինէր և քանի աչքդ կտրում էր, այնքան ա-ւելի այդ սքանչելի, այդ գեղաճիծաղ պատկերը մի շտեմնուած փառահեղութեամբ շարունակւում էր:

— Սազէ ապեր, արժէ այս գեղահրաշ բնութեան ծոցում մի լաւ նախաճաշել. հսւմ ձիերը կհանգստա-նան, կարածեն, համ էլ մենք փոքր ինչ կմեղմենք մեր յոգնածութիւնը, — նկատեցի ես:

— Դու գիտես, որդի, քէֆը ձերն է, որ դուք

բոլորդ էք ցանկանում, ևս ինչ կարող եմ ասել, — մի Լըիւրուդ, բայց դառն շեշտով առաց նա:

— Որ էդպէս է, մենք բոլորս համաձայն ենք փոքր ինչ հանգստանալու, — զրեթէ միաբերան վրաբերեցին մեր բոլոր ուղեկիցները, — իջնենք, ահա հասանք ափին:

— Ի՞նչ ափի, — յուսահատական թիւնալից շեշ-տով հարցրեց Սազէն, որը կարծես քնից նոր դարթ-նածի նման նոր ուշքի եկաւ:

— Մեր ծովակի ափին, — նկատեցի ես, — տես, ահա, — այս ասելով, ես նորից բաց արեցի կաշին

— Ահա էլի էդ ծովը էլի էդ անիրաւը ... ի՞նչու էս անաստուած ճանապարհովն եկանք, — մի խոցալից թիւնոտ ձայնով արագ-արագ կրկնեց նա, որը հազիւ-հազ մենք կարողացանք լսել, որովհետեւ ճանապարհը սկսեց զառիվայր իջնել դէպի ափը, և ձիերը սկսեցին աւելի արագացնել իրանց արտասովոր վազքը, թէեւ ուժեղ գսպանակը մի հուժկու թափով արգելում էր այդ:

Վերջապէս հասանք. մենք բոլորս լեռնային չա-րաճճի այծեմի նման դուրս թռանք կառքից: Այժմ միայն ես նկատեցի, որ Սազէն տակաւին անշարժ է իր տեղում, գլուխը կորացնելով դէպի առաջ այնպէս, որ նրա դէմքը աննշմարելի էր մնում մեզ համար:

— Դէհ, Սազէ ապեր, ել, հասանք, — նկատե-ցի ես:

Սակայն ի՞նչքան մեծ եղաւ իմ զարմանքը, երբ մեր ինքնամոռացութեան և խառնաշփոթութեան մէջ նոր իմացանք, որ զժբաղդ ծերունին ուշագնաց է

եղել: «Ջուր, ջուր, տղերք, Սաղէն նուազել է, ուշ
չկայ խեղճի վրայ»

Դեռ ևս չէի վերջացրել, երբ Դալի-Ղարդաշը վազրի
ճարպիկութեամբ լցրեց իր գտակը ծովի ափից և թը-
ռաւ դէպի ինձ: Երբ ջուր սրսկեցինք նրա գունաթափ
երեսին, նա փոքր առ փոքր զգաստացաւ, սթափւեց:
Մինչ այս, մինչ այն, մենք բոլորս դուրս բերեցինք
նրան կառքից և պարկեցրինք դետնին սփռւած գորգի
վրայ: Նա այդ ժամանակ միայն բաց արեց իր մռայլ
աչքերը, որոնց պղտոր տեսքը պարզ վկայում էր, որ
վտանգը դեռ չէ անցած. ապա լուռ դիտեց մեզ բո-
լորիս, որից յետոյ ուղղեց իր ցասկոտ հայեացքը
դէպի ծովը: Երկար չմնաց նա այդ դրութեան մէջ.
յանկարծ մի կատաղի ոստիւնով ոտքի թռաւ, դէպի
ծովը վազեց և «բալայ, ներսէ, իմ աղնահուր, ինձ
էլ ինձ էլ..... առանց քեզ իմ օրը սե է, իմ արեւը
խաւար է» ճշաց ու վայր ընկաւ դետին վերստին
թուլացած:

Այս դրութեան մէջ մենք առանց յապաղելու
հասցրեցինք նրան մօտակայ Գ... գիւղը, ուր մի
քանի օր մնալով նա ապաքինւեց և բացատրեց ինձ
իր սիրտը:

II.

Այն, ինչ սրտի մի խորին դառնութեամբ պատ-
մեց ինձ Սաղէն, ես երբէք, երբէք մոռանալ անկա-
րող եմ: Տակաւին մի առանձնակի սգալից շեշտով լըս-
ւում է ականջիս նրա վշտալից ձայնը. «Ախ, լաօ,
հազար ու մի տենչանքով, հազար ու մի այրւած փա-
փագով երկրէ-երկիր ընկայ, այս սրբի, այն սրբի դուռը
ղուլ դաբձայ, սրտի անհուն բերկրութեամբ մեր հի-
նաւուրց, մեր անճարնիւրի պաշտպան Մշու Սուլթան
Սուրբ Կարապետի լուսաթաթախ նուիրական գերեզ-
մանը համբուրեցի, որդի խնդրեցի, ներսէս ջան, բա-
լայ, որ քեզ ըէզիւման թաղէի Ախ, լաօ, այն
օրից սկսած՝ երբ քեօս բաղդը խլեց քեզ ինձանից և
զրկեց քո հայրենի գիւղը, Ղուլալին, իր կտրիճ գա-
ւակից, ոչ թէ մենակ ես, այլ ողջ մեր Ղուլալիի քեզ
ծանօթ շրջակայքը իր նոր-Բայազիտով ողբակից է
անբաղդ հօրդ» ...

Եւ չնայած, որ քանի ժամանակ է, ինչ դժբաղդ
զաւակի, նոյնքան դժբաղդ հայրը պատմել է ինձ իր
վիշտը, ես, ասացի, որ մոռանալ անկարող եմ, ոչ
նրան, ոչ նրա այնքան սեւաւոր պատմութիւնը: Մինչև
այսօր այդ տարաբաղդ հայրը, որպէս մարմնացած
դառնութիւն, որպէս վշտի մի ուրոյն արձան, թւում
է կանգնած առաջիս և արիւն-արտասուք թափելով
խռովագին մի ահաւոր շեշտով, սրտի անհուն դառ-
նութեամբ անէծք ու նզովք է կարգում թուրք-հայ-

կական տմարդի արշաւանք կազմակերպողներին, որի ժամանակ Ներսէն թողնելով իր հրեշտականման, դեղեցկատեսիլ ջահիլ-եղնիկ ամուսնուն՝ Վարսենիկին, իր փոքրահասակ մինուճար Անդրանիկին, անմխիթար մօրը, նոյնքան աւելի անմխիթար և խելացնորութեան դուռն հասած հօրը, քոյր-եղբայր, ազգական բարեկամներին, անցաւ հայ մարտիկների շարքը և որպէս նրանցից մէկը իր անվեհերութեամբ շուտով աչքի ընկաւ և զոհ գնաց իր նուիրական, իր փայփայած զգացմունքներին:

Դեռ մի ինքնուրոյն խորհրդաւորութեամբ շշնջում են ականջիս նրա ողբազին հեծկլտանքը. «Ա՛խ» պարոն, դուք ճիգեր էք թափում մխիթարելու ինձ. բայց մի մեղադրեցէք. անձամբ այցելեցէք, տեսէք իմ թառլան Ներսէի լուսանկարը և, եթէ նկարների մասին գաղափար ունէք, կհամոզուէք, որ իմ կորուստը անփոխարինելի է: Այդ նկարը իր առնական տեսքով պարզ վկայում է, թէ որպիսի գերմարդկային սիրտ է բաբախել իմ անբաղդ զաւակիս կրծքումը: Այո՛, անձամբ եկէք»

Մի քանի օր մնալով իմ հայրենի գիւղում, ուր դարձեալ խեղդող տրտմութիւնը ամենուրեք հալածում էր ինձ, ես առանց յապաղելու ուղևորուեցի Ղուլալի կատարելու ծերունի Սադէի խնդիրը:

Երա՛նի չզնայի. տեսարանը և՛ ցնցող էր և՛ սրբաւանդ: Դժբաղդ ծերունին հեռւմ էր ծով դարդի տակին: Սակայն մի բան ոգորեութեան անյաղթ թեւեր էր ասես տալիս ինձ, որ ես մօտիկից ուսումնասիրելով այդ միջավայրը, վճռեցի զրի առնել այն ա-

մենը, որոնք ստեղծագործել, կռել-կոփել էին Ներսէի ներքինը, որպէս անձնուէր մի անհատի:

III.

Յուլիսի վերջերն էր: Աղդաղի երփներանգ լեռնալանջերը գրեթէ մի սրտատոչոր ամայի տալաւորութիւն էին թողնում նայողի վրայ: Նախորդ տարիների նման այլևս չէին վիտում այստեղ-այնտեղ հազարաւոր ոչխարների հօտեր և ուրիշ չորքոտանիների նախիրներ, որոնք ամեն տարի իրանց անմեղ բառաչով թւում էր կենդանութիւն էին տալիս այդ լեռան ողջ շրջակայքին: Չկային սար եկողների «օբաներ», որոնց խայտաբղէտ վրանները տարուայ այդ ժամանակին իւրաքանչիւր քայլափոխում հանդիպում էին քեզ և յիշեցնում էին վաղեմի մարդու անփառունակ, բայց և անարատ և անմեղ կենցաղը: Թւում էր, թէ մի դիւթական, մի դիւային չարագաւ դաւաղանի նոյնքան չարաշուշ հարուածով ողջ քար է կտրել համայն այդ բնութիւնը:

Մութը նոր էր կոխել, և այդ մունջ շրջակայքը հետզհետէ խորհրդաւոր ու ահաւոր կերպարանք էր առնում, որը քանի գնում, այնքան աւելի տաղնապալի էր դառնում և ահ ու սարսափ սփռում ամենուրեք: Գիշերային այդ համատարած և խեղդող մթութեան մէջ մերթ ընդ մերթ լսում էին այս ու այն հեռաւոր ժայռերի խոռոչներում ծաւառնուն-

գամիտ բուերի չարագուշակ բւոցը, որը զիշերուայ այդ պահուն ոչ պակաս սարսափ էր պարունակում իր մէջ:

Խաւարի այդ դարաւոր սգալից երգիչը իր այդ միապաղաղ վույ-վույով ասեց մի անսասան սառնասրտութեամբ հեգնում էր և՛ կեանք, և՛ արեւ, և՛ լուսին, և՛ ողջ տիեզերքը

Ի՞նչն էր արդեօք տարուայ այդ եռուն պահուն ողջ այդ շրջակայքը կարկամած կացութեան մէջ դէրբել, ինչո՞ւ էր պապանձուել բնութեան այդ ժամանակուայ հրաշագեղ լեզուն և կամ ինչո՞ւ խեղճուկ շինականի վաղեմի վրանների երանգ-երանգ շարանները չէին զարդարել, ինչպէս միշտ, այդ լերան բլուրաւոր բուրմունքներով լի ծփացող դար ու դաշտը: Ինչո՞ւ Որովհետեւ մի քանի ամիս էր, ինչ հազար գլխանի հիդրայի նման ծառացել էր Ղարաբաղի գեղջուկի առաջը հայ-թրքական եղբայրասպան կռիւը իր ցնցող, իր անողոք զոյներով, և ահ ու սարսափը համակել էր մեր վերան երկրի նոյն իսկ խուլ ու մութ վայրերը: Ոչ ոք յոյս չունէր, թէ վաղը կարող է կենդանի մթնացնել իր սե օրը: Եղբայրասպան կոտորածի, արան-թաւանի սե սարսափով լի ուրուականը իր անսասան զոյներով ցցւել էր առաջին և ամենուրեք հեռում էր նրա թողած վիշտ ու տառապանքի աղետարշ հետքերը:

Բայց և այնպէս, եթէ մենք անցնէինք Ալդադից դէպի հիւսիս-արեւելք ընկած ձորակը, անշուշտ կը տեսնէինք, որ նրա սիզաւետ փէշերին զիշերուայ այդ պահուն անվհեր հսկայի նման կանգնած է մի ըն-

դարձակ վրան, որի սե տեսքը գրեթէ չէր էլ նշմարւում այդ համատարած խաւարի թւերի տակին: Վրանից փոքր ինչ հեռու մի անշուք աղալում անվրդով որոճում էին ոչխարները և իրանց այդ անդար որոճով այնքան էլ չէին խանգարում տիեզերքի քար լուծիւնն ու շրջակայքի անդորր կացութիւնը: Իսկ վրանում հազիւ-հազ պալլում էր ձիթի աղօտ ճրագը, որը արտաքուստ այնքան էլ չէր նշմարւում:

Վրանի մի անկիւնում նստած էին երկու հոգի, որոնցից մէկը յիսունից անց առոյգ և կայտառ դէմքի տէր էր, որի աչքերում ստէպ-ստէպ փայլում էր կանգուն ոգևորութեան այն կենդանի կրակը, երբ նա մի խուլ շեշտով դառնում էր դէպի իր խօսակիցը. իսկ միւսը՝ քսանից անց մի յաղթանդամ երիտասարդ էր, որը, ըստ երևոյթին, գտնւում էր հոգեկան անմարելի խռով դրութեան մէջ: Նա լուելայն իբր մեծ հաճոյքով լսում էր իր խօսակցին, բայց իրօք, նրա մռայլ, նրա յուսահատ ու պղտոր աչքերը արտայայտում էին այլ բան. նա ինչ որ դադանի ծըրագիրներ էր կազմում և իրան այնպէս ձեացնում, որպէս թէ ինքը լսում է իր խօսակցին, և այդ միայն նրան չվիրաւորելու համար: Երիտասարդը սպառազինւած էր այնպէս, որը որոշակի վկայում էր, թէ նա առանց յապաղելու մեկնելու է այդտեղից, և իր այդ սպառազինութեան մէջ երևում էր նրա անվախ, նրա անվեհեր հոգին: Դրանցից ոչ այնքան հեռու, թոնրի կողքին, նստել էր մի փոքրահասակ, բայց հըրաշագեղ աղջիկ ու կաթսայի տաքացրած կաթն էր.

խառնում ու զրոյց անում իր մօր հետը, որը նրա մօտին չորաթան էր պատրաստում:

— Գիտես, Ներսէ ջան, մեծի չլսելը լաւ բան չէ, որդի. հէնց սկզբից ես հակառակ էի այս տարի սար բարձրանալուն, բայց երբ դու քոնը պնդեցիր, ես զիջեցի քեզ. այ, այժմ տեսնում ես, որ իմ ասածը ուղիւ էր, ինձ Ներսէնց Սազէ են ասում, ես իմ մեռնելու օրը միայն չգիտեմ, — խռովայոյզ ձայնով նկատեց նրան ծերունին:

— Հայր, ինձ էլ Ներսէնց Սազէի որդի Ներսէ են ասում. լաւ իմացիր, ինչ արին, որ այժմ վազում է քո երակներում, նոյնը այժմ մի խուլ, մի անողոր հրդեհ է բորբոքել և իմ երակներում, — մի առանձնակի դառնութեամբ ասաց որդին:

— Հարցը այդ չէ, որդի, այլ այն, թէ այդ կուով մի՞թէ դու կարող կլինիս գտնել մեր «Դէրվիշին», որը մեր գաւառում մի հատիկ ձին էր: Հարցը այն է, որ դեռ երեք-չորս օր է, ինչ մենք սար ենք եկել, բայց մեր ձին մեր աչքի առաջից թռցրեցին անիրաւ անհաւատները. էլ հնա՛ր կայ նրան գտնելու, վաղը, ո՛վ գիտէ, մեզ էլ թերեւս գողանան:

— Ի՞նչեր ես գուշակում, հայր, չէ՞ որ դու ինքդ ես հազար անգամ կրկնել մեզ, որ քո հայրը մի ապտակի համար մի ձիթհանք է շինել: Մի՞թէ նրա ինքնասիրութիւնից, նրա անարատ «թասիբից» բնաւ զուրկ ենք մենք:

— Գուցէ և զուրկ չենք. բայց ապտակի պատմութիւնը ուրիշ է, գողացած ձիան պատմութիւնը ուրիշ: Հօրս մեր դրացիի ձիթհանքում ապտակել էին

և չէին թողել, որ հերթը նա վերցնի, նա էլ փրփրոտած այդ բանից շինեց մեր այժմեան ձիթհանքը. իսկ դու, որդի, ի՞նչպէս պիտի գտնես ձիուդ, երբ կրակն ու սուրը բռնել են մեր արար-աշխարհը:

— Է՛հ, հայր, երկչոտութիւնը և փոքրոգութիւնը համակել են քեզ. թէ այդտեղ և թէ այստեղ հզօր կամքի ոյժ է հարկաւոր. այնտեղ հզօր կամքը, վիրաւորած ինքնասիրութիւնը կառուցանում է ձիթհանք. իսկ այստեղ՝ պիտի աշխարհի որ ջահգամից էլ լինի՝ գտնի սիրած կենդանուն:

— Տեսնենք, տեսնենք, լեզուի տակին ոսկոռ չըկայ. բլբլացրու, բլբլացրու, — զայրացած նկատեց Սազէն:

— Այո՛, կասեմ և կանեմ, այ, կտեսնես. իսկ ինչ վերաբերում է թէ՛ մեզ էլ ձիու օրին կգնեն, կամ կսպանեն, դա, էստեղ, երբ ամեն քար ու թուփը մեզ ծանօթ է, էնքան հեշտ չէ:

Հայրը չառարկեց այս անգամ, միայն մի սրտամաշ ու խուլ ձայնով կրկնեց մի քանի անգամ «հըմ», «հըմ»

— «Հըմերդ», հայր, գիտեմ հեգնում են ինձ. բայց դու շուտով կհամոզւես. ես դեռ քեզ չեմ ասել. բայց իմացիր, ես հէնց էս րոպէիս պիտի ճանապարհ ընկնեմ միայն սպասում եմ ընկերներին, որից յետոյ մենք մեր ասածը կանենք: Մի՞թէ իզուր ուխտ էր, որ մենք սրտաբուլիս կերպով տուեցինք դպրոցական նստարանի առաջը:

— Հա՛, հա՛, հա՛ լսեց հօր չոր, բայց հեզնական ծիծաղը. — իմ պապս էլ, երբ Հին-Բայազիտում հացթուխ է եղել տեղական փաշային, մտքումը

դրել է առեանդել փաշայի գեղեցկատեսիլ զստերը՝
բայց

— Ի՞նչ բայց, — շարունակիր, հայր:

— Բայց փաշան իմացել է, և խեղճը հազիւ-հազ
ունեցած, չունեցածը թողել է ու փախել այս կող-
մերը:

— Լաւ իմացիր, որ անցել են քո հօր, քո պապի
ժամանակները:

— Ոչ թէ անցել են, այլ կրկնում են

Սագէի խօսքը բերանումը մնաց. գիշերային ահա-
ւոր մթութեան մէջ հեռուից լաւացին մի քանի ան-
գամ սուր-սուր շուրջների սուլոցներ, որից յետոյ
Ներսէի դէմքից վայրկենաբար ցրւեց թախծութեան
այն մոայլը, որը պահել էր նրան ողջ երեկոն, և նա
մի ոտիւնով ոտքի թռաւ և ուրախ ժպտաւ երեսին
կրկնեց. «եկան, տղերքն են»: Դեռ նա խօսքը չէր վեր-
ջացրել, երբ հինգ զինւած երիտասարդներ մտան վը-
րանը ու միաբերան կրկնեցին:

— Բարի երեկոյ:

— Ա՛յ, Ասու բարին, — ասաց Ներսէն, որից յե-
տոյ Սագէն դարձաւ դէպի իր կինը:

— Դէվոյի աղջիկ, ա՛յ, տեսնում ես մեր ձի
փնտռողներին. իմ խելքս, կնիկ, բան չի կտրում,
քոնը՝ չեմ իմանում:

— Ինչո՞ւ, քա մարդ:

— Նրա համար, կնիկ, որ բոլորն էլ չեն եփւել
կեանքի բովում. մեր Ներսէին, հօ, գիտե՛ք, իսկ սը-
րանք բոլորն էլ անձանթ չեն մեզ, բոլորի Յնւած
օրն ու սհաթը գիտեմ. սա մեր Դալի-Ղարդաշն է:

էս՝ մեր Սիրօն է, էս՝ մեր Մուշէն, էս՝ մեր Մոնթը,
էս էլ Աբեղան է, — մի առ մի թւեց եկողների մական-
նունները, — համա, կնիկ, եթէ դրանք խելք անեն
մեր էս աղջկան, Մարգարտին էլ կտանեն. էլի մի ոյժ
է, պէտք կդայ, — ծիծաղելով ասաց Սագէն:

— Քա մարդ, դու էլի քո կատակների տուտը
բաց արեցիր. ի՞նչ պակաս տղաներ են. դործն է մարդի
կատարելագործում, ուրեմն որքան դործ, այնքան
հմտութիւն:

— Ապրիս, կնիկ, ապրիս, դաս դու՛ էլ գնաս:

— Որ գնամ, քեզանից զօջաղ կլինիմ. դու միայն
հարաւից, հիւսիսից խօսալ գիտես: Բայց լաւ իմա-
ցիր, որ դրանց ամեն մէկի կրճքում մի-մի էնպիսի
սիրտ կայ, որպիսին դու քո յիսուն տարւայ ըն-
թացքում տեսած էլ չես:

— Պրծանք, կնիկ:

Մինչ երկու ամուսինները այսպէս փսփսում
էին ու զւարճանում, տղաները լաւ ընթրեցին ու
դուրս եկան, կորան խաւարի մէջ:

— Զեր ջանին մատաղ, խեղճ հայի աւեր օջախի
կանդուն սիւներ, ձեզ բարի ճանապարհ, եղէք հաս-
տատուն ձեր անձնուրաց որոշման մէջ, իմ ասած-
ները հեգնանք էր Երկար-երկար մթութեան մէջ
լսում էր արտասուող Սագէի երեւող ու ոգևորիչ
ձայնը:



IV.

Սկանայ ծովակի արևմտեան բարձրութիւններէց մէկն էլ կազմում է «Աւդլա» սարը՝ որի կատարին գտնւում է նոյն անունով մի փոքրիկ լճակ։ Այդ սարից սկսւում է Գեղարքունեաց գաւառի հռչակաւոր հովիտը՝ «Այրի-Չայ»՝ ուր իւրաքանչիւր տարի Արարատեան դաշտի բոցակէզ արևի ճառագայթներէց իրանց զլուխը փրկելու համար չլուծ են հազարաւոր թուրք ու քուրդ սարւորներ և իրանց օթաներով մնում են այդ հովասուն, այդ ալեծածան հովիտներում։ յաճախ մինչև սեպտեմբերի վերջերը։ Տարւայ այդ ժամանակին այդ երփներանգ դար ու դաշտը ծփում է մի չտեսնւած, մի աննկարագրելի տեսարաններով, ուր հիւսիսից սպիտակին են տալիս վրանների անթիւ ու անհամար շարաններ։ Ամեն մի ցեղ, ամեն մի գիւղ ունի իր սեփական օթատեղը։

Սակայն այնպէս չէր այս տարի. բոլոր այդ սարւորները առանց ցեղի ու ազգի խտրութեան խմբել էին մի ընդարձակ տափարակի վրայ, որի հարաւային կողմից բարձրանում էին պափարների ահռելի և լերկ կոյտեր իրանց բիւրաւոր ծմակներով, ուր պատսպարւում էին սարւորները յարձակումների ժամանակը։ Այս տարի այդ բոլորի տէր և զլուխ էր հանդիսանում Քեօլանցի Մահմեդ աղան, որը իր աւազակային, իր արիւնդուշտ կատաղութեամբ զրեթէ իշխում էր բոլորի վրայ, նրա ասածը՝ ասած էր, նրա

կտրածը՝ կտրած։ Ո՞վ կյանդգնէր ձայն-ծպտուն հանել նրա առաջ։ Նա իր խստադին, իր ահեղ բնաւորութեամբ զրեթէ զինել էր ողջ սար եկողների բազմութիւնը և պատուհաս դառել շրջակայ հայ գիւղերի համար։ Երբ այս տարի նա ոտքը դրեց Այրի-Չան, մի չտեսնւած փութկոտութեամբ զէնքի ընդունակներին զինելուց յետոյ սկսեց ճիգեր թափել, ինչ գնով էլ լինի, ձիեր ճարել դրանց համար։ Հէնց այդ էր պատճառ, որ նրա ասպախումբը երևում էր ամենուրեք։ Եւ մեր գաւառում օր չկար, որ սրա-նրա ձին չզոդանային։ Եւ այդպէս, մի քանի շաբաթւայ ընթացքում նա ձիերի մի սոււար ջոկ էր պատրաստել, որը գիշերները պահում էին վրաններից ոչ հեռու գտնւած փապարներում առանձին պահապանների հսկողութեան ներքոյ։ Սակայն այս գիշերը պահապանների ողջ էութիւնը համակել էր մի ընդհանուր թուլութիւն, և նրանք բոլորն էլ տանջւում էին քնեածութեամբ. քնի մառախուղը խեղճացրել էր բոլորին, և նրանք ակամայից նիրհում էին իրանց նստած տեղերում, հաւատացած լինելով, որ շրջակայքի թուլասիրտ երկչոտ Ֆլաները սիրտ չեն անի անցնել Այրի-Չայի սահմանը։ Եւ այսպէս է, երբ մի որեւէ վտանգ է կանգնած լինում անհատի զլխին, թւում է թէ՛ յաճախ բնութիւնն էլ է նպաստում նրա իրագործմանը։ Վերջապէս, նրանք արդէն ընկղմեցին խոր քնի մէջ և սկսեցին ազատ-համարձակ լողալ երազանքների աշխարհում, ուր օրւայ չարն ու բարին իրանց դաժան, իրանց խեղդող ու այլան-

դակ կապանքներով այլևս չէին ցցւում, չէին ծառանում նրանց առաջը:

Լուռ էր ողջ Այրի-Չայի հովիտը: Միայն մի հատիկ մարդ էր տակաւին զարթուն, որը իր ընդարձակ վրանի խորքում լռեւեան ինչ-ինչ դժոխային ծրագիրներ էր կազմում և մերթ ընդ մերթ իր քնած գեղեցկատեսիլ կնոջ: Զէյրան խանմի վառւած դէմքին նայում, որը առաւել ևս թե ու թիկունք էր տալիս գաղան ամուսնու այդ ծրագիրներին. ապա դուրս էր գալիս վրանից, մի քանի քայլ հեռու անցնում և իր խռպոտ ձայնով ճշում ու թնդացնում տիրող մեռելային ու խորհրդաւոր լռութիւնը իր զգուշացուցիչ կոչով «սարվախտ օլուն»: Հեռու խաւարում մի քանի անգամ կրկնում էր նրա կոչի երեւող արձագանքը, ապա կորչում խաւարի ովկիանոսում: Վերջապէս, նա էլ լռեց, հանեց իր շորերը և մտաւ իր Զէյրանի ծոցը

Հէնց ուղիղ այդ ժամին Աղդադից Այրի-Չայ տանող ճանապարհին հանդարտ ընթանում էին մի քանի կանգուն սուէրներ, որոնք զիշերւայ այդ տաղնապալից պահուն շրջիկ ոգիների էին աւելի նման, քան անցւորականների: Սակայն եթէ կարելի լինէր նշմարել նրանց զիշերւայ մթութեան մէջ, անշուշտ կը համոզւէինք, որ նրանք բոլորն էլ ոտքից-գլուխ զինւած էին և առաջ էին շարժւում պաշտպանելով փորձւած մարդի խորին և անվիճելի զգուշութիւններ: Յանկարծ նրանք բոլորն էլ կանգնեցին և վայրկեանաբար պատրաստեցին իրանց գէնքերը. նրանց ականջին զգալի շերտերով զարնւեցին մի քանի անգամ մարդ-

կային հեռից լսող երգի քաղցրագոյ ելեէջներ, որոնցից նրանք հազիւ-հազ ըմբռնեցին միայն հետեւալ բառերը.

«Մեր աշխարհում, հայ աշխարհում, մէրը մանուկ ուրացաւ,
«Հայի սիրտը լաց ու կոծով, դարդ ու յաւով լցւեցաւ.
«Հէյ սարեր ջան, ձեզի դուրբան, ի՞նչ էք գուք ինձ ասելու,
«Ձեր ցաւ չատ է, չատ մի տխրէք, թէ լան ունիք ասելու»...

Ապա նոյնը ձայնը մի քանի անգամ կկրկնեց թրքական զիւանիից ինչ որ կտորներ ու լռեց:

—Մուշէ, կարող ես ասել թէ՛ երգողը ի՞նչ ազգութեան է պատկանում, —մըմնջաց անցւորականներից մէկը իր ընկերներին:

—Ներսէս ջան, ես թող Մուշէն չլինիմ, թէ երգողը հայ չէ:

—Ես էլ եմ այնպէս մտածում. բայց մի՞թէ հաւատալու բան է այս ամեհի լեռներում, ուր մարդի գլուխը սոխի դնի է հաւասար, մի հատիկ հայ զիշերւայ այս պահուն սիրտ կանէ թափառելու այս վայրերում:

—Ինչո՞ւ չէ. մի՞թէ հայը մարդ չէ:

—Մարդ է, բայց այժմ պայմանները այլ են:

—Իսկական մարդի համար չկան պայմաններ, ուր էլ որ լինի:

—Դէհ, լաւ, լաւ վիճելու ժամանակ չէ:

Անցւորականը ներսէն էր իր խմբով:

Մինչ սրանք այսպիսի անտեղի վէճով էին բռնւած, ինքը երգողը մի քանի քայլ հեռաւորութիւնից ձայն տւեց.

—Ո՛վ էլ որ լինէք, ես արդէն ձեր խօսակցութիւնից հասկացայ, որ հայի հետ դործ ունիմ, եթէ ոչ:

—Եթէ ոչ, ի՞նչ էիք անելու.—հարցրեց Ներսէն:

—Որքան անմեղ հարց. կմեկնէի ա՛յ հէնց էս քարի տակին և երգերիս փոխարէն հրացանիս երգել կտայի ձեր ջանին: Միթէ կարելի՞ է զիշերւայ այս պահուն, այն էլ այս արինսում վայրերում այդպէս խմբւած շարունակել ճանապարհը ու բարձր խօսակցել: Ես զգալի հեռաւորութիւնից լսեցի ձեր խօսակցութիւնը և դադարեցի երգելուց, որպէս զի լաւ լըսեմ ձեզ: Ձեր պապերից միթէ չէք լսել, որ զիշերւայ ձայնը հեռու է գնում:

Նրանք մօտեցան միմեանց և բարկեցին:

—Ճիշտ է, ճիշտ ձեր նկատողութիւնը, պարոն, կարելի՞ է արդեօք իմանալ թէ՛ ո՞վ էք դուք և ո՞րտեղից էք գալիս, հարցրեց Ներսէն:

—Իմ ով լինելը հետաքրքիր չէ ձեզ համար, իսկ գալս Մասիսի ստորոտներից է:

—Ներսէ, մի լուցքի վառի՛ր, տեսնեմ: Ղրա ձայնը շատ ծանօթ է ինձ, մնում է միայն կերպարանքը դիտել.—վրաբերեց Մուշէն:

Ներսէն խկոյն վառեց լուցքին:

Մուշէն մի տնտղող հայեացք զցեց անծանօթի վրայ և փարւեց նրա պարանոցով ու ճշաց.

—Վայ, վարժապետ ջան, էս ի՞նչ հանելուկ է:

—Գոչեց նա:

—Ասի չպիտի ճանաչես, բայց երևում է, լաւ յիշողութիւն ունիս:

—Ի՛նչպէս չճանաչել, երկու տարի էլ չկայ, ինչ Բուլանխում պատահեցինք և մի շաբաթ շարունակ իրար հետ ման եկանք: Միթէ մոռանալու ժամեր էին:

—Ապրի, տպրիս, այժմեան պայմաններում արժէ այդպէս զգոյշ լինել

—Ինչպէս չէ, պ. Սահունի, հէնց էն ժամատեղն էլ դուք պահանջում էիք, որ զգուշութիւնը պիտի ղեկավարի մեզ մեր ամեն մի քայլափոխում:

—Կեցցես, այդ ո՛ւր էք հապա գնում այդպէս սպառազինւած:

—Այրի-Չայ:

—Լաւ, լաւ, քիչ տուջ գայիք, ինձ էլ այնտեղ կգտնէիք. սակայն ոչ այսպէս, այլ մի մոլեռանդ դէրվիշի դերում և անհաւատները կասկածել անգամ չկարողացան:

—Քեզ նախախնամութիւնը ուղարկել է մեր առաջ,—նկատեց Ներսէն,—ուրեմն դու կարող ես և մի քանի տեղեկութիւններ տալ մեզ այդ անհաւատների մասին:

—Ուրախութեամբ, պատրաստ եմ:

—Այս երկու ամուսնայ ընթացքում այդ շները ահ ու սարսափ սփռել են մեր կողմերը, և օր չի անցնում, որ մեր զիւղերից ձիեր չգողացւեն: Այս քանի օր է, իմ ձիս էլ գողացան. մենք էլ գնում ենք՝ ինչպէս և լինի գտնելու ու յետ բերելու նրան:

—Ուրմն, մեղանից ամեն մէկը մի ցաւ ունի՝ ես էլ փնդրում եմ զրացիիս նորատի աղջկանը, Վառէին, որը առեւանգւած և բերւած է այս կողմերը և որին

չգտայ Այրի-Չայի հովտում: Լսւում է, որ նրան տարել են Հ...:

—Այդ լաւ զուգադիպութիւն է, պ. Սահունի, եթէ մեզ յաջողւի գտնել մերը, երբեւում ենք հայի ամեն սրբութիւններով՝ մենք քեզ միայնակ չենք թողնելու և հէնց վաղ առաւօտեան կհասնենք ձեզ:

—Այո, այո, մենք քեզ մենակ չենք թողնելու, ձայնակցեցին բոլորը, և Դաւի-Ղարդաշը, և Սիրօն, և Գեօղեցի Մուշէն և միւսները:

—Ապրիք, կտրիճներ, շնորհակալ եմ, ես այժմ կերթամ Հ... գիւղը և ծպտեալ կերպով կաշխատեմ ճիշտ վառէի տեղը իմանալու: Այդ անելուց յետոյ ես դուրս կգամ և գիւղից փոքր ինչ հեռու եղած ձորակում կսպասեմ ձեզ: Իսկ դուք այս հովտում եղած «Չնդրլ» կոչւած փապարներում կգտնէք ձիերի մի մեծ բազմութիւն. — Եւ նա նկարագրեց օբայի և ձիերի տեղերի դիրքը ու շարունակեց իր ճանապարհը:

Մի ժամից յետոյ Ներսէն իր խմբով արդէն վազրի ճարպիկութեամբ մերթ փոքսող տալով, մերթ ձեռքերի վրայ չանգոնելով հասաւ փապարներին: Ծները մի չը տեսնւած վայնասուն բարձրացրեցին, բայց վայրկեանբար լռեցին. Ներսէն իր գրպանից ածեց նրանց առաջ մանրացրած, գրեթէ ալիւր դարձրած մսի կըտորներ խառնած իւղած հացի փշրանքների հետ: Ծները մոռացան ամեն բան: Երկար ժամանակ էր հարկաւոր, որ թշուառ կենդանիները ջոկ-ջոկէին հողերի մէջ շաղ տւած իրանց այդ համեղ կտորները: Մինչ այս, մինչ այն Ներսէն առաւ Սիրոյից ձիերի սանձերը ու թոկերը և բաժանեց ընկերներին, կրկնելով

«Իւրաքանչիւրդ կընտրի իրան համար հեծնելու իր հաւանածը և այս թոկերովն էլ մի կամ երկու հատ «ետակներ» անի: Մոնթին ես թողել եմ մեր հակառակ կողմը, որ երբ հարայ-հրոց բարձրանայ, նա մի քանի անգամ կրակի իր հրացանը շփոթեցնելու համար, ապա անցնի դէպի մեր եկած ճանապարհը: Դէ՛հ, զգոյշ:

Մի քանի րոպէից յետոյ նրանցից իւրաքանչիւրը բազմեց մի-մի իր ցանկացած ձիան վրայ և մի-մի երկու-երկու էլ «ետակ» անելով դուրս եկան փապարներից և սլացան դէպի իրանց ճանապարհը: Ծուտով նրանց միացաւ և Մոնթը ու հեծաւ իր ձին: Թւում էր թէ՛ ամեն ինչ յաջողութեամբ էր վերջանալու. սակայն այդ միջոցին շները կերտն իրանց պաշարները և թե առածի նման գոռում-գոչիւնով ընկան տղաների յետեից: Նրանց ձայնի վրայ ողջ օբան ոտքի թռաւ և ընկնելով տղաների յետեից սկսեցին կարկտի առատութեամբ գնդակներ թափել նրանց վրայ: Բարեբաղդաբար, քնից նոր վերկենալով իրանք էլ հաշի չէին առնում թէ՛ ում հետ զործ ունին և ինչ է պատահել, այդ պատճառով և նրանց գնդակները իրանց նպատակից վրիպում էին: Սակայն այս բանը երկար չտևեց. յանկարծ հալածող բազմութեան վրայ օբայի կողմից տեղացին գնդակներ, և իւրաքանչիւր անգամ հալածողներից զետին կին գլորւում կիսակենդան զոհեր, որոնք անէճք ու նզովք մըմնջալով իրանց դաժան ճակատագրին, յաւիտեան փակում էին իրանց աչքերը: Ներսէն հասկացաւ, որ մի աներևոյթ ձեռք իրանց օգնութեան է հասել, և ձիերը

յանձնելով միւս ընկերներին, ինքը Սիրոյի հետ պատսպարւելով մօտակայ ժայռի յետեւ նոյնպէս սկսեցին կրակել հալածող բաղնութեան վրայ, որոնք տեսնելով, որ իրանք ընկել են երկու կրակի արանք, մի կերպ խոյս տւեցին և փախուստ տալով անցան փապարները և մտան նրանց անառիկ ծմակները. բայց իրանց այդ իրարանցումով վախեցրին և մնացած ձիւրին որոնք փնջալով դուրս թռան իրանց աղալից և սրարշաւ կորան մթութեան մէջ: Տեսնելով, որ իրանց այլևս չեն հալածում, ներսէն ու Սիրօն բարձրացան իրանց տեղերից և հէնց էն է ուզում էին շարունակել իրանց ճանապարհը և հասնել ընկերներին, երբ մէկը զրկեց նրանց.

— Ա՛յ, տես՞ք, ի՞նչ օյին հանեցի անհաւատների գլխին. ի՞նչ է, կարծում էիք, որ ես վտանգի ժամին թողնելու էի ձեզ:

— Վայ, պ. Սահունի, էդ դուք էիք էդպիսի քարէ կարկուտ թափում նրանց գլխին. դէհ, այժմ գնանք միասին, — միտքերան կրկնեցին նրանք:

— Ո՛չ, ներսէ, ես պիտի առաջ գնամ հետագօտելու զիւղը և գտնելու թշուառ զոհին: Ես ձեզ կսպասեմ ձորակում: Ապաց ու բաժանեց:

V.

Ամեն անգամ, երբ այս ու այն հեռաւոր լեռան լանջերին, կամ խոր-խոր ձորերին ես հանդիպում եմ մեր կիսախաբիսուլ վանքերին ու մենաստաններին, որոնք իրանց մենաւոր լռութեան մէջ ասես

կենդանութեան թռչեքներ են գործում ու ցլոււմ առաջիկ շնշալու քեզ իրանց հինաւուրց, իրանց վաղեմի ծով ցաւ ու դարդը, ինձ համակում է մի աղետալ, մի ցաւոտ ներքին խուլ տառապանք, որը առաւել ևս խորունկ թափերով է ալեկոծում ինձ և երբուն կացութիւն ստեղծում ինձ համար, երբ իմ բուռն տենչալից ճիգերը՝ մի բան իմանալու նրանց մասին՝ անցնում են ապարդիւն: Ո՛հ, որպիսի այրւած, որպիսի վառւած իզձերով կուզէի, որ այդ նւիրական շէնքերի քար ու թուփը լեզու առնէին պատմելու ինձ իրանց ծով ցաւ ու դարդը, թէ ո՞ր անգութի, ո՞ր դաւաճանի ձեռքն է խախտել ու կարճել զիրանց անդորր կենցաղը: Վշտի դառնագին խոցերի ինքնամոռացութեան հովերով բռնկւած՝ քանի որպիսի ոգելից ժամեր ու օրեր եմ անցկացրել այդ տարաբաղդ սրբավայրերի կարկամած, տնկզու և խաբիսուլ կամարների ներքոյ և իմ դարդոտ երազանքներիս մէջ հեւ-հե շատ հեռու լողացել, ուր զրանց անդարձ անցեալը, պճնուած Հայաստանը, իր փառունակ շուք ու զարդով կանգնել է առաջիս, և երկաթ-երկաթ մաղձոտ յոյզերով, արտասուածոր աչքերով անէծք ու նզովք է շնչացել իր սեւ, իր կոյր ճակատագրին

Այսպիսի կիսախաբիսուլ մենաստաններով լեցուն է և Գեղարքունեաց աշխարհը, որոնցից շատերը կառուցել է Մարեմը, Սշոտ 1-ի մաքրակենցաղ դուստրը և Սիւնեաց Վասակ-Գաբուռի ամուսինը: Անշուշտ այդպիսիներիցն է և Բիւզաճի գիւղի բարձրաբերձ լեռան զազաթին բաղմած «Իլիկու» կամ, ինչպէս անւա-

նում են տեղացիները «Պառաւի» վանքը՝ որը այժմ անւանի է որպէս ուխտատեղի։ Այստեղ տարէն մի քանի անգամ մի աւանձնակի աւնածութեամբ խրմբում է շրջակայ հայ գիւղերից ուխտաւորների մի զգալի բաղմունքիւն, երբ վանքի շրջակայքը շնչում է մի ինքնուրոյն կենդանութեամբ։ Այստեղ են պառաւկանանց շատ բան տեսած աչքերը և ջահիլների հրաբորբոք սրտերը ընտրում իրանց համար հարսնացուներ։ Այստեղ են սիրում ու սիրւում մատաղահաս աղջկերքը։ Եւ վերջապէս այստեղ է արձակում գեղջկուհի աղջկերանց քաղցրախօս լեզուն իր կապանքները, և դու լսում ես նրանց դարդու «լէ-լէն»՝ «եարօ ջան» և հագարաւոր խանդավառ երգերը, որոնց նա իր անխօս մենաւորութեան մէջ յօրինել է, ուր և դրել է իր պապական ծախսն ու հոգին, և այն միայն իր «եարին» նւիրելու համար։ Այստեղ է նա բոլորում նահապետական «եայլին» և իր ճկուն, իր նազելի ու դիւրաթեք իրանը խաղացնում այս ու այն կողմ, երբ նրա երկարաւուն սեւթոյր վարսերը այդ ժամին ալեծածան օրօրներով շօրօրւում են իւրաքանչիւր անգամ և աւելի ևս զեղեցկատեսիլ կերպարանք տալիս նրա շնորհալի պարին։

Այս, ո՛րքան քաղցր է այդ ամենը

Հէնց այդպիսի ուխտի օր էր, և այդ վանքի հանուր շրջակայքը թնդում էր հայ-գեղջկուհու պարերի ու «լէ-լէ»-ների ձայներից։ Սակայն ուխտաւորների ստւար բաղմունքեան մէջ իրանց չնաշխարհիկ իրանց գեղեցկատեսիլ արտաքինով աչքի էին ընկնում Տէր-տէրանց Վարսենիկը և Ներսէնց Մարգարիտը։ Եր-

կուսի անմեղ և անարատ դէմքերից այդ օր չէր հեռանում տրտմութեան այն սեւ մշուշը, որը իր թանձրը շերտերով համակել էր նրանց ողջ էութիւնը։ Մերթ ընդ մերթ նրանք լուեկան դարձնում էին իրանց թախծոտ աչքերը դէպի վանքի այն միակ ճանապարհը, որը տանում էր այս ու այն գիւղեր և օբաներ, և վերստին յուսահատ մի խուլ հառաչանքով շարունակում էին իրանց անց ու դարձը։ Ի՞նչն էր վրդովել նրանց կուսական, նրանց գողտրիկ և անդորր կենցաղը։ Ի՞նչ չարաշուք ձեռք էր ստեղծել նրանց համար այդ անխօս, այդ անլեզու և չարատանջ կացութիւնը, երբ նրանց արտասուալից պղտոր աչքերը պարզ վկայում էին, որ մի ներքին խուլ կըրակ ամենուրեք բորբոքում է նրանց խոցերը և հանդիստ ու դադար չի տալիս։ Ոչ պարում էին, ոչ խնդում և ոչ երգում, իսկ ստէպ-ստէպ մի զաղտագողի երկչոտութեամբ հազիւ լսելի ձայնով, փսփսուկով, իւրաքանչիւրը մենախօսութեան մէջ էր մտնում և կրկնում ինքնիրան. «ո՛ւմ համար խնդամ»։

Այս, կուսական բոցակէզ սրտեր, ո՛րքան զգայուն էր դուք, ո՛րքան զաղտնի ցաւեր կան զիզած ձեր անխօս խորշերում ո՛րքան օրինակելի պաշար կամբարէր վշտահիւս բանաստեղծի սգալից գրիչը իր սիրոյ օրօրների համար, եթէ գէթ մի օր, մի ժամ, դուք վանէիք ձեզանից ձեր վաղեմի ամօթխածութեան դարաւոր կապանքները և ձեզ յատուկ յոյգերով մերկացնէիք ձեր սիրտը նրա առաջ

Վարսենիկը և Մարգարիտը իրանց միապաղպանց ու դարձով վերջապէս, ձանձրանալով, բռնեցին-

վանքի ճանապարհը և վճռեցին փոքր ինչ հեռու անցնել ուխտաւորներին, որպէս զի կարողանան ազատ շնչել և ազատ խօսել: Նրանք անցան դէպի Երանոսից եկող ճանապարհը: Հետեւինք, ընթերցող, դրանց:

— Գիտե՞ս, Մարգարիտ ջան, սրտիցս արիւն է գնում, ամբողջ մարմինս մղկտում է, արտասուքը խեղդում է ինձ, բայց ձեռքիս չարա չկայ. ուխտ եկող էլ խօմ չէի. եկայ, որ քեզ տեսնեմ և ինչ որ ցաւ ունեմ, ասեմ քեզ, իսկ դու նրան—եղբօրդ— ասեմ, երբ նա վերադառնայ.—մի դառնութեամբ նըկատեց Վարսենիկը:

— Վարսո ջան, ի՞նչ է պատահել, դու դեռ ինձ բան չես ասել. մի լաց և քիչ էլ ցածր ձայնով խօսիր. էս քարերի տակին նստողներ կլինին և մեզ կը լսեն:

— Էլ ի՞նչ պատահի. երեք տարի Ներսէն եղել է իմ արեւն ու կեանքը. նրա անունը՝ իմ երգւելու սուրբը. իսկ ինքը՝ իմ միտքն ու հոգին. բայց անհոգիները էսօր երեկոյ ինձ պիտի տան ուրիշի, պիտի նշանեն Աւօյենց Գարեգնի հետ:

— Վր՛ւյ, վախկոտ շեշտով հառաչեց Մարգարիտը, — Ես էլ կարծում էի, թէ Ներսէն էստեղ չէ էսօր, դրա համար ես տրտում, ոնց որ ես տրտմում եմ Բ...ի համար: Ա՛խ, ինչ տեսակ տղաներ են, էսօրւայ օրը մարդ բա՛ էստեղ չի լինի. ինչո՞ւ մենք էլ էսօր ուրիշների նման քէֆ, ուրախութիւն չպիտի անեինք:

— Հա, հա, Մարգարիտ ջան, անունները փոխել են. մէկը՝ Սիրօ է դրել, մէկը՝ Աբեղայ, մէկը՝ Մուշէ:

Իսկ քոնը Դալի-Ղարդաշ, և ո՞վ գիտէ, ինչո՞ւ սարեր են ընկել. ախր ի՞նչ կայ:

— Ա՛խ, Դալի-Ղարդաշի հոգուն մատաղ. նրա անունը ինձ աւելի է դուր գալիս, Վարսօ ջան, հէնց էդ անւան մէջ շատ բաներ կան՝ մի ամբողջ մարդի վարք ու բարքի պատմութիւն:

— Դու իմ ցաւը մոռացար. Մարգարիտ ջան, և քոնը սկսեցիր մտաբերել: Դուք կարժանանաք ձեր մոռարդին, համա իմ դրութիւնը անտանելի կլինի:

— Իմ ցաւը միշտ առաջիս է, չեմ մոռացել, որ նորից մտաբերեմ: համա քո ցաւն էլ պիտի հոգամ. Լթէ Ներսէն էսօր չվերադառնայ, ես հօր ու մօրս կասեմ և զիտեմ, որ դործը լաւ կլինի. երբ հայրս իմանայ, որ Ներսէն առանց քեզ ապրողը չէ, և կամ քեզի պիտի թոյնեն նրա ձեռքից, հէնց էսօր կտանի ձեզ, որից յետոյ, երբ դու ինձ եղբօր կին կդառնաս, մի՛ մոռացիր ինձ ու իմ Դալի-Ղարդաշին:

— Ա՛խ, բերան չէր, տաճար էր

Դեռ Վարսօն խօսքը չէր վերջացրել, երբ հեռւից երևացին մի խումբ ձիաւորներ, որոնք սրարշաւ ընթանում էին դէպի ուխտաւորները:

— Վարսօ ջան, ինչ լաւ բան կլինէր, եթէ նըրանք լինէին:

— Ի՞նչ պիտի անէիր:

— Ի՞նչ.— Ես հէնց էստեղ եղբօրս առաջը կը կտրէի և քո ասածները ամենը կհաղորդէի նրան: Ես եղբօրս բնաւորութիւնը լաւ եմ իմանում. նա, երբ ամեն բան իմանայ, էսօր իրիկուն ոչ թէ կնշանւի, այլ շատ կարելի է պսակւի էլ: Ո՞վ պիտի հակա-

ռակւի. չէ՞ որ քո ծնողները աւելի ուրախ են եղբօր քեզայ ունենալ, քան Աւոյենց տղին. իսկ իմը՝ եղբօրս խօսքից դուրս չեն գալ:

Մինչ սրանք այսպէս զրոյց էին անում, ձիաւորները այնքան մօտեցան նրանց, որ Մարգարիտը ճանաչեց եկողներին և արծւի արագութեամբ վազեց իր եղբօր առաջը: Եկողները ներսէն էր իր ընկերներով, որոնք վերադառնում էին Այրի-Չայի արշաւանքից: Ներսէն շատ ուրախացաւ, երբ տեսաւ քրոջը. սակայն երբ լսեց նրա պատմութիւնը, մի քանի անգամ ջգաձգական ցնցումներ գործեց և բարձր ձայնով գոչեց. «Ճատ լաւ, տեսնենք, որիս մէրը տղայ կբերի. էսօր իրիկուն ամեն բան կվերջացնեմ, կամ այլևս կենդանի ման չեմ գալ գետնի վրայ. գնա և նրան էլ ասիր»: Սակայն Վարսենիկը ոտքից զլուխ լսելիք դառած՝ բառ առ բառ լսում էր նրան: Նրա սիրտը լըցւեց մի ջերմաղին բերկրութեամբ: Նա գիտէր, որ իր «եարի» ասածը ասած է:

Երբ ներսէն վերջացրեց իր ասելիքը, Դալի-Ղարդաշը մօտեցաւ Մարգարիտին և մի այնպիսի այրած ձայնով բարեկեց նրան, որ Մարգարիտը զողաց ողջ մարմնով, մի ցուրտ սարսուռ անցաւ նրա երակներով, և նրա այտերը վարդի գոյն ստանալով որոշակի ասես վկայեցին թէ՛ իր այլայլած, իր երերուն դրութիւնը սիրահարներին յատուկ լռութեամբ թւում էր ամեն բան պարզեցին նրան: Եւ իրօք, Դալի-Ղարդաշը սիրահարներին յատուկ խորաթափանց զգայութեամբ հասկացաւ ամեն բան և իրան աշխարհում

երջանիկներից-երջանիկների շարքը դասելով մտրակեց իր ձիուն և հասաւ իր հեռացող ընկերներին:

Տեսնելով ներսէին ուխտաւորների բազմութեան միջից անցաւ մի հզօր շուկ թէ՛ «ասլան է, ասլան, մարդի տղան. կեցցէ Սադէն, որ էդպէս աժդահայ տղայ ունի. ո՞վ կհաւատար, որ էս տարւայ նման արինխում տարւայ զազանների բերանից հնարաւոր կը լինի խել էդպիսի համեղ կտոր, որպիսին է նրա ձին. բայց տեսէք, քանի հատ են բերել: Չէ, աղբէր, մարդի տղան՝ տղայ է մէկ խօսքով»

Այդ երեկոյ ներսէն ամուսնացաւ իր Վարսենիկի հետ:

Խաչաղբէրը Դալի-Ղարդաշն էր:

VI.

Գիշերայ սև ու դաժան աղջամուղջը մի խորհրդաւոր և համատարած լռութեամբ կապել-կաշկանդել էր բնութեան հրաշագեղ ու բազմազան լեզուն, և իշխանաց վանքի ողջ հովիտը քար կտրած՝ հեռւմ էր տիեզերքի կարկամած ովկիանոսում մի ահաբեկած սարսուռ ազդող միակերպութեամբ:

Գիշերային հանդիստը իր միապաղաղ դերի մէջ մտած՝ խաղաղ ու անվրդով նինջով շարունակւում էր: Ոչ մի շարժում, ոչ մի շուկ չէր խանգարում տարերային այդ անդորր կացութիւնը: Գիշերւայ մրափը իր սև մշուշով ողջ կենդանի արարածների ճակատ-

ներին դրել էր անխուսափելի կնիքը, և արար-աշխարհը գամուած իր տեղում կատարում էր քնի քաղցր օրօրներ:

Մի ջղաձգական սոսկում էր անցնում երակներովդ, երբ մի առանձնակի հետամտութեամբ զիտում էիր աղջամղջի անծայր ովկիանոսը իր նոյնքան առաւել անսահման երկինք-գետինքով: Թւում էր, թէ մարդկային անիրաւութիւնների մի ծով էր սփռւած առաջիդ, որը մի գերագոյն խնամքով սքողում էր հետազոտող հայեացքից իր ահռելի, իր զազիր կերպարանքը:

Գիշերւայ այդ օրհասական, այդ տաճնապալից պահուն Հ... զիւղից զաղտագողի դէպի մերձակայ ձորակն էր անցնում մի հատիկ մարդ, որը իր ողջ էութեամբ և՛ զարմանք և՛ սարսափ էր ազդում իր շուրջ: Մի թոյլ շշուկով անգամ նա չէր խանգարում տիրող մեռելային լուսութիւնը: Ահա՛ նա հասաւ և մտաւ ժայռերից կաղմած վաղօրօք ընտրած իր քարայրը և ինքն իրան սկսեց յուսահատութեամբ լըցւած մարդի նման փսփսալ և տրտունջ յայտնել: Քանի՜ օր էր, ինչ նա կատարում էր իր միապաղաղ երթևեկութիւնը զիւղից դէպի քարայրը և հակառակը: Սակայն ամեն անգամ էլ նրա սիրտը լցում էր մի անսահման տրտմութեամբ և նա իր յուսահատութեան երերւող նաւի վրայ լողում էր հեռու, շատ հեռու: «Ի՞նչ անեմ, Տէր իմ, այդ թշուառականները ինձ խօսք տւեցին գալուս հէնց հետևեալ օրը այստեղ հասնել, բայց արդէն եօթներորդ օրն է՝ չրկան ու չկան: Եթէ չլինէին նրանք, ես թերևս զործը

այլ կերպ սկսէի և այժմ մենակ վերջացրած էի»։ այսպէս ինքնիրան զայրացկոտ միմնջում էր անծանօթը, — եթէ այսօր անյաջող անցաւ, և նրանք չեկան, վաղ առաւօտեան անշուշտ կփոխեմ ծրագիրս և մենակ կիրադործեմ այն, ինչպէս մտադրած էի:

Այժմ տեսնե՛ք թէ՛ ի՞նչ էր կատարւում գիշերւայ այդ պահուն Հ... զիւղում:

Գիւղի ծայրին գետնի երեսին հազիւ նշմարւող մի գետնափոր տնակ էր երևում, որի դուռը դրախցամուր փականքներով փակւած էր: Տնակի անշուք յարկի տակին հազիւ-հազ պլպլում էր մի ճրագ, որը իր աղօտ լոյսով դրեթէ այնքան էլ չէր լուսաւորում տնակի շրջապատը: Տնակի խորքերից մերթ-մերթ լուսւում էր մի դառնագին լացի աղեկտուր հառաչանք, որը իր ցաւոտ սուգ ու շիւանով թնդացնում էր այդ տիրող միջավայրի միապաղաղ կացութիւնը: Մի դեռատի, մի դեղեցկատեսիլ աղջիկ էր այդ, որը իր մեծաւորութեան մէջ անձնատուր եղած իր ներքին վիշտ ու տառապանքին, մի խուլ հեծեծանքով ողբում էր իր սև օրը և նողկանքի անհուն դառնութեամբ անէծք ու նղովք կարդում իր սևաւոր ճակատադրին: Նա մի խորունկ ինքնամոռացութեամբ ծունկ էր չոքել և արտասուալից աչքերով աղօթում էր ու սգում իր ծով վիշտը: Մինչ սա կենում էր այս կացութեան մէջ, դրսի դուռը մի դառն ճռուցով ազդարարեց, թէ մարդ է մուտք գործում թըշուառի մօտ: Նա մի սուր ցնցում զգաց իր մարմնով, որը ջղաձգական գալարներով անցաւ նրա երակներով:

— Հա, ֆլայ, էլի՛ աղօթում ես, էլի՛ ձեր Դրիս-

տոսի հետն ես խօսումի—հարցրեց նրան մտնողը հեգնական ժպիտը երեսին։ Աղօթողը ոչինչ չխօսեց, այլ փութապէս սրբեց իր արտասուալից աչքերը և հեռացաւ խրճիթի մի անկիւն։

—Ինչո՞ւ չես խօսում Վառէ ջան, ես եկել եմ վերջին մնաս բարովը ասելու։

—Ի՞նչ է, անհոգիք, անաստեղծներ, դէ՛հ մի անգամից սպանէք, աղատեմ ձեր ձեռքից, էս երկու ամիս է, ինչ դուք հանգիստ ու դադար չէք տալիս ինձ. մի օր էստեղ էք բանտարկում, միւս օր էնտեղ, հերիք չեղաւ, մի՞թէ։

—Ի՞նչ անենք, որտեղ թագցնում ենք, անիրաւ ֆլաները հոտդ առնում են. էս քանի օրս էլ ասում են, մի ինչ որ զրբաց է եկել, տնէցտուն ման եկել և հոտդ առել է։ Հիմի են հասկանում մեր յիմար քրդերը, որ նա ֆլայ է եղել և ոչ քուրդ։ Ա՛յ, թէ ձեռքս կընկներ։

Բանտարկեալը մնաց քարացած, նա սոսկաց, երբ հասկացաւ, որ դժբաղդ Սահունու հինգ-վեց օրւայ ճիգերը ապարդիւն են անցնելու։ Դժբաղդ զոհը չգիտէր, որ իր իւրաքանչիւր քայլը, շարժւածքը լրտեսում են, ինչպէս և լրտեսել են Սահունու խօսակցութիւնը իր հետ։ Դեռ թշուառ զոհը իր մտատանջութեան մէջն էր, երբ խրճիթը մտան մի քանի քըրդեր և հրամայեցին նրան դուրս գալ։ Անբաղդ աղջիկը թուլացաւ, ընկաւ դետին, որքան լեզւի ճարպիկութիւն ունէր, աղաչեց, պաղատեց, սակայն եկողները մնացին անյողդողդ իրանց որոշման մէջ. քանի գիշեր էր, նրանք վճռել էին նրան հեռացնել այդտեղից։

—Ես հիւանդ եմ, մի տարէք ինձ ուրիշ տեղ, ի սէր Մուհամէտի, ի սէր ձեր իմամներին՝ խղճացէք ինձ. ինչո՞ւ միանգամից չէք սպանում, աղատեմ, մի՞թէ վերելը Աստուած չկայ։

—Ծառ մի խօսա, անդգամ, քէշիշութիւն մի արամեր զլխին, մենք քարոզչի կարիք չունինք։

—Որ էդպէս է, ես կենդանի դուրս չեմ գալ էստեղից, դուք մարդիկ չէք այլ շներ, անհաւատներ. դուք ձեր աղւետութիւններով ուզում էք իմ հետքս կորցնել կամ դաւանափոխ անել, էդքան միամիտ մի եղէք, շան հետ կընկերանամ, հաց կուտեմ. բայց ձեզ հետ՝ ոչ։ Ծուներ քաղաքավարի է ձեզանից։

—Տօ, անդգամ, հերիք է,—գոռաց մի թխադէմ քուրդ և մի ուժգին ապտակ տւեց նրա երեսին։

—Տնւր, տուր, թարս-մասաբ,—առանց ցաւի տրտունջ յայտնելու վրաբերեց անբաղդը։

—Տղերք, բաւական չեղա՞ւ դրա վայրահաչուութիւնները լսելու. դէ՛հ, դուրս բերէք։

Մի քանի թուրք ու քրդեր վրայ պրծան և քաշքուտելով դուրս բերին տարաբաղդ զոհին։ Իսկոյն նրա ոտքերը և ձեռքերը կապեցին ձիան վրայ և կորան խաւարի մէջ։ Վառէն ի դուր օրհասական ճիգեր էր դործում մի կերպ վայր զցելու իրան ձիուց. անհաւատները այնպէս էին ամրացրել նրան իր տեղում, որ նրա իւրաքանչիւր փախչելու փորձը անցնում էր ապարդիւն։ Տեսնելով, որ այլևս յոյս չկայ, նա օգնութիւն գոչեց մի այնպիսի ձայնով, որը արձագանք առած՝ մի մեծադղորդ թնդիւնով խանդարեց տիրող լռութիւնը և իր սուր ելեէջներով անցաւ,

գնաց հեռու, շատ հեռու ու կորաւ խաւարի ուփ-
փիւնոսում:

Քարայրում եղած մարդը սոսկաց. նա փոքր ինչ
ունկնդիր լինելով ըմբռնեց թէ՛ բանը ինչու՞մն է և
շանթահար եղածի նման դուրս թռաւ իր բնից:

«Մի՞թէ անհաւատները բան են իմացել» որ թըշ-
ւառ զոհին հեռացնում են այստեղից. չէ, ես ամեն
միջոց պիտի դորժ դնեմ խանդարելու այդ, կամ
կսպանւեմ, փոյթ չէ» ... փնթփնթում էր անծանօթը
և ուղիղ դէպի աղերսող ճիւղը ընթանում: որը զի-
շերւայ այդ պահուն ասես սրտի անհուն դառնու-
թեամբ բողբոլում էր և՛ խաւարի, և՛ տիեզերքի, և
մարդկային բռնակալական անիրաւութիւնների, և իր
անբաղդ ճակատագրի դէմ: Վերջապէս, նա հասաւ և
այն ճանապարհից ոչ հեռու, ուր պիտ' անցնէր թըշ-
ւառ զոհը, դիրք մտաւ մի ահագին ժայռի յետև և,
պատրաստելով իր տասնեակը՝ սպասում էր:

Վառէին առևանգող եօթն քրդերը մի թաշկի-
նակ հրելով դժբաղդ աղջկայ բերանը, անվրդով շա-
րունակում էին իրանց ճանապարհը: Ահա՛ նրանք հա-
սան, սակայն յանկարծ որտեղից—որ էր որոտաց տաս-
նեակաւոր ատրճանակը, և քրդերից մէկը մահացու
վիրաւորւելով՝ ընկաւ գետին: Վերջինս, որպէս զի ա-
ւելի զգալի դարձնէ իրանց զոհի ետև ընկնողների
վիշտը, փոխանակ ընկած տեղից կուլելու իր ախոյեանի
հետ, ուղղեց իր հրացանը դէպի տարաբաղդ զոհը:
Որոտաց հրացանը և սևաբաղդ վառէն արինշաղախ
կախեց ձիուց: Անծանօթը աւելի ևս կատաղեց և
սկսեց այնպիսի հուժկու զայրոյթով աջ ու ձախ կրա-

կել իր ատրճանակը, որ շուտով քրդերից հինգը սպան-
ւեցին, իսկ մնացած երկուսը հեւի-հեւ սկսեցին փախ-
չել դէպի զիւղը. մինչդեռ զիւղից հրացանների ձայ-
ներին զալիս էր քրդերի մի ստաւ բազմութիւն: Սա-
կայն նախախնամութիւնը յաճախ այնպիսի մոմենտի
է օգնութեան ձեռք կարկառում թշւառներին, որ
սպասել անգամ աներևակայելի է:

Կուլի այս ճգնաժամին որտեղից—որ էր դարձեալ
դէպի հրացանի ձայները քափ ու քրտինք կտրած՝ ար-
շաւում էին տասնից աւելի սպառազինւած ձիաւոր-
ներ: Կուլի վայրից փոքր ինչ հեռու ահա՛ նրանք վեր
եկան իրանց ձիերից և տալով նրանց իրանց ընկեր-
ներից մէկին, իրանք հետիոտտ աճապարեցին դէպի
կուղիները և դիրք մտնելով՝ իրանց գլխաւորի նա-
խօրօք կարգադրութեան համաձայն տնտղելով թէ՛
ում հետ գործ ունեն և իբր հասկացած այդ, սկսե-
ցին կուլել զիւղից եկող քրդերի և թուրքերի հետ:
Անծանօթը երբէք չէր հաւատում, որ այդ իսկ ժամին
կգտնուի մէկն, որ իրան օգնի: Սակայն այդ օգնու-
թիւնը կար, և այն էլ մեծ չափով: Վերջապէս, նա
ուրախութեամբ ձայն տւեց.

—Անտարակոյս եմ, որ ինձ անսպասելի օգնու-
թեան եկողները ներսէն է իւրայիններով:

—Այո, այո, մենք ենք, մենք, պարոն Սահունի,
հասել ենք,—ձայն տուին եկողները, որոնք իրօք ներ-
սէն էր իւրայիններով, որին և միացել էին ե... քա-
ղաքից եկող մի քանի երիտասարդներ, որոնց առաջ-
նորդում էր Թադէ-Ամիրը:

—Ապրիլք, ապրիլք, թէ՛ և ուշ, բայց լաւ ժամանակ էք հասել. դէ՛հ, ձեզ տեսնեմ:

Ներսէն Պառաւի վանքից վերադառնալով ստիպւած եղաւ, ինչպէս տեսանք, ամուսնանալ և հինգ վեց օր մնալով իր նորահարսի մօտին, ահա այժմ միացած ոյժերով Թադէ-Ամիրի հետ օգնութեան էր հասել Սահունուն, որը թերեւ կարողանար կենդանի փրկել դժբաղդ Վառէին, սակայն նա այնքան այժմ էլ չէր յուսահատուում, տեսնելով, որ անբաղդ աղջկան առևանգողները պատժւած են չարաչար:

Մինչև արշալոյս շարունակւող կռիւը վերջապէս ստիպեց Հ.....ցիներին թողնել իրանց զիւղը և փախուստ տալ դէպի մերձակայ լեռները և այնտեղից էլ դէպի Վայոց-Ձոր և այլ վայրեր: Այս կուում սպանւեց Ներսէի ընկերներից միայն Երանոսցի Մոնթը և վիրաւորւեց Դալի-Ղարգաշը, որ յետագայ արշաւանքներին անկարող եղաւ մասնակցել:

Այդ օր Ք... զիւղում առօք-փառօք Թադէ-Ամիրի խումբը Ներսէի հետ հողին յանձնեցին Վառէի և Մոնթի դիակները և մի երկու-երեք ամիս այս ու այն զիւղեր ու վայրեր շրջելուց յետոյ Ներսէն, դարձեալ իր ընկերներով, որոնց կառավարում էր Ե...ցի Մուշէն, ստիպւած եղան անցնել Գեղամայ ծովակի Գիւնէ կոչւած ափը, ճօրջան:

VII.

Նոյեմբեր ամիսն էր:

Գեղարքունեաց աշխարհի վախուկ արեւը դեռ նոր էր մայր մտել. դեռ նոր էր Ղուլալի գիւղը իր ամեհացած դար ու դաշտով ծածկել խաւարի սեւաթոյր թևերի տակ, դեռ նոր էր աղմկայոյզ անց ու դարձը դադարել փողոցներից, և ամեն ինչ պատրաստուում էր զիշերային հանդիստ վայելել, երբ Ներսէեց Սադէի բազմանդամ գերդաստանը վերջացնելով իր անշուք ընթրիքը, խմբել էր զիւղական նոյնքան աւելի անշուք օղայի քարեայ թումբերի վրայ և ինչ որ տաք-տաք զրոյցի բռնւել: Իսկ դուրսը գոռոգ քամին այնպիսի սուր-սուր, այնպիսի կատաղի ունոցներ և շիւտային ճիչ ու աղաղակ էր հանում, որ մահասարսուռ դողը փշաքաղում էր ողջ էութիւնը: Տարւայ այդ պահուն խենթացած հողմերի, փրփրոտած փոթորիկներէ մի այնպիսի տագնապալի, այնպիսի ահեղ և օրհասական ողբ ու խլացուցիչ աղաղակ է լսում ամենուրեք, որ յաճախ մարդը անտարակոյս մտածում է թէ՛ ահա՛ մի բոպէից, մի ժամից յետոյ երկինքը փուլ է գալու: Իսկ եթէ նման տարերային իր գաղաթնակէտին հասած մոնշիւնների ժամանակը այդ երկրի սար ու ձորը պատած է լիւնում ձիւնով, հօ՛ զժոխքը իր սոսկալի, իր ցնցող գոյներով ողջ իր դարշելի, իր աղեկտուր ու զաղիր կերպարանքով ցցւում է առաջիդ, որից յետոյ մարդ

արարածը մի ներքին դառնութեամբ զգում է իր ան-
զօրութիւնը, իր ոչնչութիւնը բնութեան առաջ:

Նման փոթորիկները, բուք ու բորանի ժամանակը
քա՛նի-քա՛նի դժբաղդ անցորդներ են ուժասպառ լի-
նում և խոտորելով իրանց ճանապարհները այս ու
այն քեօլ ու քեօսի տակին սառչում և կնքում իրանց
վախճանը: Սակայն այս տարի տակաւին ձիւն չկար-
ձիւնի փոխարէն կար առատ փոշի, որը հողմերի ա-
ռաջ ընկնելով մի հուժկու թափով տարւում էր հե-
ռու, շատ հեռու... Հողմերի ինքնուրոյն շողերին
մի չտեսնեալ ներդաշնակութեամբ առաւել ևս ահա-
բեկող սարսուռ էր տալիս և ծովակի դառնազին հա-
ռաչանքը, որը՝ ի մի խառնելով նրանց ճիչ ու աղա-
ղակների հետ՝ մի տարերային այնպիսի մեծադորդ
որոտումներ, գոռում-գոչումներ և բարձրագոյ ու-
նոցներ էին առաջացնում, որ հանուր սոսկումը, ահ
ու սարսափը իրանց մահագոյ լուութեամբ կապում,
կաշկանդում էին կենդանի արարածների քաղցրախօս
լեզուները, և քար լուութիւնը իր մեռելային մշտա-
լուութեան տիրապետում էր ամենուրեք:

Այո, տարերային նման յախուռն խառնաշփո-
թութիւնների ժամանակը բնութիւնը մտնում է իր
գերագոյն դերի մէջ և մահագուշակ սարսափը թա-
գաւորում է ամենուրեք:

Ահա բնութեան այդ օրհասին Սազէի և Նրա
որդի Ներսէի մէջ տեղի ունէր նոյնպէս մի այնպիսի
խօսակցութիւն, որը զրեթէ մոռացութեան էր տալիս
տիրող շրջապատի գերագոյն տագնապը:

— Ներսէ, լաօ, ինձ լսիր, ձեռք վերցրու էդ

արիւնոտ ճանապարհից. կեանքիս վերջալուսին մի
թիւնաւորիւ իմ օրը, մի սեպտու իմ աբեւը, ադ
ու լեղի մի խառնիր իմ կերակուրի հետ: Սիրտս
տակն ու վրայ է լինում, մի ներքին ձայն իր ուժեղ
շեշտով գոչում է ինձ, իսկ ես, տառապեալ հայրդ,
աղաչ-պաղատում եմ քեզ, դու, արի, ինձ լսիր, մի
գնա: Ես հակառակ չեմ ընկածներին, թոյլերին և
անարգաւորներին օգնութեան ձեռք մեկնելուն, միայն
էս անգամին, երբ դեռ ծովի էն կողմը—Գիւնէն—
էդպիսի բան չկայ, մի գնա, վաղաժամ է: Յիսուն եր-
կար ու ձիգ տարիներս ապարդիւն չեմ անցկացրել.
կեանքի մեծ դասեր եմ առել. չափւել, ձեւել էդ
կեանքի մէջ. փորձութեան դասեր առել նրանից, և
միշտ էլ հետեւել սրտիս ձայնին, որը երբեք չի խա-
բել ինձ, հէնց էդ հիման վրայ էլ պնդում եմ, որ
չգնաս»,—մի թախծոտ, մի տրտմազին ձայնով, որի մէջ
լսւում էր սիրող հօր այրւած-պապական ծանր
գայուն լարերի զալարող շեշտը, աղերսում էր Սա-
զէն իր որդուն:

— Հայր, խօսք ու երգում եմ տւել ընկերներիս
տանջանքի բովում վառւող, եփւող խեղճերի, ան-
ճարների անունով և երգմնազանց անկարող եմ լի-
նել: Ես հակառակ չեմ քեզ, միայն զիտեմ, որ շատ
անգամ սրտերը իրանց այս ու այն կոչով ու ենթա-
դրութիւններով կարող են սխալւել: Բացի այդ մենք
երկար չենք մնալու Գիւնէում, այլ մի թեթեւ պտոյտ
կանենք այնտեղ, որպէս զի կատաղած փրփրոտած
անհաւատները տեսնեն, որ իրանց հարեան փոքրա-

թիւ հայերը անպաշտպան չեն, ապա կվերադառնանք մի քանի օրից յետոյ, — առարկում էր Նէրսէն:

— Որդի, քեզ դպրոցն է սովորեցրել, որ սրտերը կարող են սխալւել, իսկ ինձ կեանքը իր բաղմամբ իւր փորձերով: Դպրոցը առանց կեանքի փորձերի ինձ համար էն չէ, ինչ դու կարծում ես: Բացի էդ՝ հարազատ սիրտը ունի իր առանձին գուշակութիւնը, որը իմ յիսուն տարւայ ընթացքում երբէք, կրկնում եմ, չի խաբել ինձ: Ես հաւատում եմ դպրոցին, բայց աւելի շատ՝ կեանքին, մէկը առանց միւսի ունի իր թերութիւնները, միայն չպէտք է մոռանալ, որ կեանքը պարունակում է իր մէջ ամեն բան. ես այդ կեանքի հարազատ զաւակն եմ և երկրպագուն:

— Ախր, ինչո՞ւ ես դու վախենում, հայր, ահա այս զէնքերը իմ ձեռքիս են. մի՞թէ ես կնիկարմատ եմ, որ նրանցով չկարողանամ հատուցում տալ թըշնամիներին, եթէ բանը այդ տեղը հասնի:

— Ախր, որդի, լսիր ինձ. էդ զէնքերը շատերի տունն են քանդում. երբ ես խօսում եմ կեանքի մասին, դու պիտի լաւ հասկանաս, որ զէնքն էլ է ապարդիւն էնտեղ: Դու լաւ իմացիր, որ ինքդ մի տարի էլ չկայ, որ զէնքի հետ գործ ունիս, էն էլ ոչ միշտ, ուրեմն զէնքը քո ձեռքին շատ անգամ էն չի լինի, ինչ նրա ձեռքին, որը տասը տարի է վերցրել-գործ անել նրան: Զէնքն էլ ունի իր լեզուն, որը անհասկանալի է հիմի քեզ: Մենակ զէնքով բան չի լինի:

— Ի՞նչ ասելուց երևում է, հայր, որ ինձ չես թողնելու. բայց ես կերթամ, երգումս բարձր է ամեն բանից:

— Այո, եթէ ինձ լսես, չեմ թողնելու և չեմ էլ ցանկանում, որ ուրանաս երգումդ:

— Ի՞նչ կանես որ:

— Ի՞նչ ... քեզ սպասեցնել կտամ, մինչև որ քո միւս ընկերները, որոնք Վայէ-Վայից վաճառի կողմերն են, դանձնոր կասեմ՝ «լաօ զնա», որովհետեւ էդ ընկերներիդ մէջ կան տղաներ, որոնք զէնքի հետ երկար ու ձիգ տարիներ են քնել ու զարթնել: Խօ՛մ, դու չես երգել, առանց նրանց զնայու: Գիտեմ, երգւել ես Գիւնէ զնալ ու կը զնաս դրանց հետ:

Ներսէն տեսաւ, որ հօր հետ ոչինչ չի կարող անել, վճռեց խաբել նրան:

— Հայր, գուցէ հէնց էդպէս էլ անեմ. հիմի պիտի անցնենք դեռ Նորադուզ դիւղը, որտեղից պիտի ճանապարհւենք Գիւնէ ծովի վրայով: Տեսնում ես, ծովը ալեկոծում է, զնալ չի լինի: Մենք կանցնենք Նորադուզ, կիսմբւենք և կսպասենք մեր միւս ընկերներին, որոնք Մահդէսու առաջնորդութեամբ շուտով պիտի գան Վայէ-Վայի կողմերից: Մենք կմիանանք նրանց հետ և կգնանք:

— Էդ դէպքում, կարող ես, միայն զգուշութիւն, որը շատ անգամ մեծ գործ է տեսնում, քան քո զէնքերը:

Ներսէն ուրախացած մօտեցաւ հօրը, համբուրեց նրա ձեռքը:

Ծերունի Սադէն արտասուածոր աչքերով զրկեց նրան և այնպէս պինդ սեղմեց նրան իր կրծքին, կարծես թէ՛ վերջին անգամ էր տեսնում նրան:

Եւ այսպէս, հրաժեշտ տալով իւրայիններին, Ներ-

սէն դուրս եկաւ և կորաւ թանձրաշերտ խաւարի մէջ: Նրա յետեւից մի ուժգին թափով լսեց քամիների դժոխային ոռնոցներ, կատաղի սուլոցներ, ու Սազէն կսկծաց ողջ մարմնով. նրան թւում էր թէ՛ դրանք յաւիտեան խլեցին իրանից իր ներսէին:

Լուսաբացին Նորադուղի ծովեզերքին խմբւած իր ընկերներով Ե...եցի Մուշէն, որոնց մէջ էր և Ներսէն, պատրաստեցին յողալ դէպի Գիւնէ: Սակայն ծովը տակաւին շարունակւում էր ալեկոծւել մրկած ուժի ալիքներով, և նաւավարները սիրտ չէին անում ոչ մի պայմանով ճանապարհ ընկնել:

— Ես ձեզ ասում եմ՝ հէնց այս բոպէիս նաւակները առաջ բերէք, նստենք. եթէ ոչ, — սպառնալիքին ձայնով ճչում էր Ներսէն:

— Ներսէ, ի սէր Աստուծոյ, մեղք ենք մենք, ընտանիքի տէր ենք, կիսեղղւենք մենք էլ, դուք էլ, — թախանձում էին նաւավարները:

— Տո՛ւ, անզգամներ, ես ձեզ հետ պիտ' խաթրո՞վ խօսեմ, հա՛:

Այս ասելով նա փամփուշտը դրեց հրացանի մէջ և բերանը ուղղեց երկու կրակի մէջ ընկած նաւավարներին:

— Աման, մի՛ սպանիր, մի՛ սպանիր, կգնանք. մեղք ու վարձը քո վիզը լինի, — վախեցած ձայնով աղաչում էին նաւավարները:

— Դէ՛հ, շուտ պատրաստեցէք նաւակները, — հրնշում էր Ներսէն, շարունակելով բռնել հրացանը նրանց վրայ, որից յետոյ վայրկենաբար պատրաստեցին նաւակները, և նրանք բոլորը, թւով 17 հոգի

մաքառելով տիեզերքի ահաբեկող որոտումների հետ լողացին դէպի Գիւնէի Շօրջա կոչւած ափը:

VIII.

Մի քանի ժամից յետոյ անընդհատ քափ ու քրտինք թափելով և մաքառելով խռովայոյղ ծովակի տագնապների հետ Ներսէն իր ընկերներով վերջապէս հասաւ Շօրջայի ափը: Այստեղից խումբի կարծիքը բաժանւեց երկուսի. մի մասը պահանջում էր՝ ոչ ոքի աչքին չերևալ և իսկոյն ևեթ ճանապարհ ընկնել լեռներով դէպի հայկական գիւղը՝ որը գտնւում էր որոշ հեռաւորութեան վրայ, որի պաշտպանութեան համար և գնացել էին իրանք. իսկ միւսը՝ պահանջում էր՝ մտնել մօտակայ մալականի գիւղը՝ հանգստանալ, ապա շարունակել իրանց ճանապարհը: Դժբաղդաբար վերջինների պահանջը տարաւ յաղթանակը, և տղաները մօտան մալականի գիւղը և պատսպարւեցին ճանապարհի վրայ գտնւող մալականի խանութում: Այստեղ տղաների ուշադրութիւնից վրիպեց մի դէպք, որը տակն ու վրայ արեց նրանց ողջ ծրագիրը:

Գիւղում կային պատահամբ մի քանի թուրքեր, և մալականները երկնչելով, որ պատսպարելով տղաներին, լարում են իրանց դէմ հարեան թուրքերին և թշնամացնում իրանց հետ և որպէս զի այդ բանը տեղի չունենայ, մի առ մի պատմեցին այդ թուրքերին և տղաներին ստիպեցին հեռանալ իրանցից և իզուր իրանց թշնամութեան պատճառը չը

դառնալ: Ոչ մի բան յետ չկանգնացրեց մալականներին իրանց որոշմունքից և տղաները ստիպւած եղան անձանօթ ձորերով ու արահետներով շարունակել իրանց ճանապարհը: Ինչ կարծիք, որ թուրքերը նախ քան տղաների դուրս գալը կայծակի արագութեամբ թռան մերձակայ թրքաբնակ գիւղերը և ոտքի կանգնացրեցին նրանց բնակիչներին, որոնք ստուար-ստուար զինւած խմբեր կազմելով բռնեցին թակարդի մէջ ընկած մեր տաքարիւն և անհեռատես տղաների ճանապարհը թէ առաջից և թէ կողքերից. իսկ ետեւից ծոփն էր ու Մալականի գիւղը: Երբ փոքր ինչ առաջ գնացին, Ներսէն սար ու ձոր բարձրացնելով իր հայացքը, մնաց տեղն ու տեղը քարացած. նա տեսաւ դարան մտած բազմութիւնը ու կշռելով իրանց դիրքը ու զրութիւնը սոսկաց ողջ մարմնով:

— Մուշէ, դու մեր առաջնորդն ես, մեր զրութիւնը ցնցող է, առաջ գնալ օգուտ չի բերի, վերադառնանք ծովի ափը, — նկատեց նա իրանց զխառնրին:

— Ներսէ, վերադառնանք ծովի ափը, դարձեալ օգուտ չենք ստանալ, մալականները զինւած են, չեն թողնում, որ մենք այլևս իրանց գիւղը մտնենք, պարզ է, որ թուրքերը մեզ պիտի հալածեն մինչև ափը և կոտորեն: Աւելի լաւ է, ձայն տանք նրանց, որ մենք ճանապարհորդներ ենք և իրանց հետ գործ չունենք, գուցէ թողնեն անվտանգ անցնենք:

— Դու գիտես, բայց մեր զրութիւնը աւելի քան վտանգաւոր է, գնանք:

Դեռ մի քանի քայլ չէին արել, երբ առաջից և

յետեւից կարկտի արագութեամբ թափւեց նրանց գլխին զնդակների մի սոսկալի տարափ: Որքան Մուշէն ձայն տւեց, հաւատացրեց, որ իրանք անվտանգ անցորդներ են, անկարող եղաւ համոզել թուրքերին. վերջիններս արդէն զիտէին թէ՛ ում հետ գործ ունեն: Այստեղ մի զոհ տալով, տղաները նահանջեցին դէպի ծովի եզերքի ժայռերը, ուր և դիրք մտնելով սկսեցին պատասխանել նրանց: Տարաբաղդաբար, նրանց զնդակները բոլորն էլ գրեթէ անցնում էին առանց նպատակի. պատանման ժայռերի տակից նրանք անկարող էին վերելում դիրք բռնած իրանց հալածող թշնամիներին մազաչափ մնաս անդամ տալ: Ընդհակառակն, թուրքերը իւրաքանչիւր անգամ, երբ տղաները դուրս էին հանում ժայռերի տակից իրանց զուխները, որպէս զի նշան բռնեն, պարզ տեսնում էին նրանց առանց վրիպելու տեղն ու տեղը կամ զնդակահար էին անում նրանց կամ վիրաւորում: Տեսնելով, որ գործը այսպէս կարող է աւելի երկարել, անհաւատները սկսեցին նաւթ սրսկել տղաների վրայ և վառւած խոտեր ու քօթուկներ զրորել վերելից դէպի նրանց, որից յետոյ խեղճերի զրութիւնն զժոխային կերպարանք ստացաւ:

Շատերը խեղդելով ծուխից ու կրակից իրանց նետում էին ծովը ու յաւիտեան կորչում նրա ցուրտ ջրերում: Փակւած իր ծխալից որջում Ներսէն զգալով, որ իր վախճանը մօտ է, հերոսական վճռողականութեամբ ողևորւած՝ մի քանի ոստիւնով թռաւ դէպի ծովակի մէջ եղած մօտակայ ժայռը, որի կատարը փոքր ինչ դուրս էր ջրից, և մտաւ նրա ետեւ:

Եթէ նա հանգիստ նստէր այստեղ, թերեւ անջնաս աղատուէր, ինչպէս աղատեցին իրա ընկերներէից շատերը, սակայն նեղածների, տնանկների ու խեղճերի օգնելու տենչով ուխտով կուրդաշտ իջած կտրիճը անկարող եղաւ դիմադրել իր ներքին կարեկցական անձնազոհ զգացմունքներին և այստեղից կիսով չափ ջրի մէջ նստած՝ սկսեց կրակել դէպի թուրքերը, որպէս զի արգելք լինի նրանց կրակներ թափել իր ընկերների վրայ: Թուրքերի կատաղութեանը չափ չը կար. նրանք տեսնում էին, որ կտրիճի գնդակը իւրաքանչիւր անգամ իրանց շարքերից դուրս էր բերում մէկ, երկու կուռղների, և վճռեցին, ինչպէս էլ որ լինի, վերջ տալ կտրիճի կեանքին: Եւ ահա, մէկ անգամ, իբր նա գլուխը դուրս բերեց ժայռի յետեւից, որպէս զի կրակի իր հրացանը, թուրքերից ամենայայտնի հրացանաւորը պարպեց իր ձեռքինը: Մի ջղաձգական ցնցում գործեց քաջի ողջ մարմինը, և ձեռքի հրացանը նետելով դէպի ծովի անդունդը, ինքը խոր հառաչելով ընկաւ նրա ցուրտ ջրերի զրկում:

Վէրքը մահացու էր:

Գիւնէի վաղորդեան հովասուն զեփիւռը մի մեղմադին, մի միապաղաղ շուտով հանդարտ և դուրախ ձայնով թեթեակի փչում էր՝ ասես իր այդ միալար փսփսուկով տքնում էր ցրելու քնէած երկրի երեսին զիզած այն սևերես մշուշը և անխօս մրափը, որը իր համատարած թևերով կապել-կաշկանդել էր ամեն

ինչ իր տեղում: Եւ իր բազմազան ճամբին մերթ սըրտալի քնքշութեամբ, մերթ պապակեած անյազ ծաւառով գուրում-գուրգուրում էր տակաւին խորասուզած քնի քաղցրաշունչ խորաններում՝ վշտահար աշխարհի չարաբաղդ զաւակների, քար ու թփի անսասան ու տաքնապոտ երեսը և օձային դալարներով ճիգեր թափում ոտքի կանգնեցնելու թմրած բնութիւնը:

Սակայն ապարդիւն

Համատարած տարերային նիրհը տակաւին իր անդորր թափով շարունակում էր: Միայն տեղ-տեղ հեռաւոր ամայութեան մէջ լսում էր այս ու այն լեռան խոռոչներից քաղցած թռչունների, զազանների խռպոտադին կոնչոցը, որը համը տիեզերքի սփկիանոսում անտես հալում ու անհետանում էր: Իսկ այստեղ, քթիդ առաջին ծովակն էր իր փշուր-փշուր ալիքներով և՛ ծփում, և՛ փշշում, և՛ վշշում, պըճպըճում ու լալիս, ասես իր այդ խլաձայն հեծեծանքներով օրօրներ փսփսում և հանգիստ մաղթում քնած բնութեան, արար-աշխարհին: Մինչդեռ ծովի երեսին այդ ժամին, որպէս հաւքերու երամ, անդադար տարուբերում էին բազմաթիւ նաւակներ, որոնք ջրի ալեծածան և խշաղցող մակերևոյթին հաղիւ-հաղ նշմարում էին և դէպի նորադուզ գիւղի տափարակը ընթանում մի այնպիսի լողով, որ թւում էր թէ՛ անհուն տիեզերքի վիշտ ու տառապանքով, ցաւ ու դարդով լինին բռնաւորութեամբ և դէպի արնածոր արցունքի սրտածմլիկ և անդարձ զերութեան կապանքները յաւիտեան շարժելիս լինին: Ոչ մի ձայն, ծրպ-

տուն չէր լսում այդ մեռելադոյն նաւակներից, որոնք սակայն տակաւ առ տակաւ մերձենում էին ափին, ուր օրւայ այդ պահուն միայն մի հատիկ մարդ էր՝ կարծես բռնկւած դիւային չարախինդ դաւարներով՝ անդադար անց ու դարձ անում, յետ ու առաջ գնում, լռակեաց տնքում, հեծեծում, ախ ու վախ հառաչում և միալար անյոյս դէպի մերձեցող նաւակների երամբ նայում և վերստին շարունակում իր անչափ, անկշիռ և անհաւասար քայլերը։ Մռայլութեան թախծոտ սև շղարշով թւում էր պատած լինէր նրա ողջ էութիւնը։ Հայեացքը վրդովազին և պղտոր, դէմքը ցաւոտ և սև մրուրով համակւած, որից սուգ-դժոխք էր ծորում, ճակատը վտահիւս, որի տակից, որպէս կնճռոտ ամպերի շարքերում, մերթ անմարելի բոց ու կրակ, մերթ մեռնող կեանքի վերջին ցոլքեր էին ժայթքում նրա արնաշիթ աչքերից։ Որքան նաւակները մերձենում էին, այնքան, առաւել խռովայոյդ կերպարանք էր առնում անձանթը և ինքնիրան կորցնում, դարգանդում, դողում ու ցընցւում ցաւերի ահեղ փոթորիկներից։ Անսիրտ և անծայր տանջանաց գոռ հեղեղը մի հուժկու թափով, ահարկու մռնչիւնով դարնում, զլորում էր նրա յաղթահար ողջ էութիւնը և դէպի խելացնորութեան հիասթափիչ հեղեղատը մղում և պապանձեցնում, լալ դարձնում նրա յաւէտ քաղցրախօս լեզուն։

Եւ նա լուռ էր լուռ ծով տանջանքի, ծով կսկիծի բովում ի տես արար-աշխարհի

Քնաթաթախ կեանքը հետզհետէ ոտքի ելաւ

Եւ նորադուզից մինչև ծովափը ծածկեց շար-

ժւող մարդկանց ստւարախիտ բազմութեամբ, որոնք հապճեպ քայլերով, խորունկ տրտմութեամբ լցւած՝ յոյսակորոյս և անմէր գառների նման խմբւում էին ափին և անվերջ յառում իրանց վտահիւս հայեացքը նոյնպէս դէպի եկող նաւակները, վերջապէս, եկողները նոր նշմարեցին վշտի ծովի մէջ խեղդւող անծանօթին և մէկ-մէկ մօտենալով նրան փորձեցին սիրտ տար յուսադրել-մոխթարել նրան թէ՛ «լուրը կարող է սուտ, հնարովի լինել», թէև իրանք էլ զգում էին, որ դիմակաւորւած կեղծիքի հովերով խաբում են և՛ իրանց և՛ անձանթին, որը զրանց իւրաքանչիւր նրման մխիթարական դարձածքներին մի անսասան և խոր հաւատով լուելեան-նշանացի պատասխանում էր, դնելով դողդոջուն ձեռքը իր սրտի վրայ, կարծես, ուզում էր ասել. «անտեղի են, անտեղի ձեր սրտառուչ յուսադրող խօսքերը, քանի որ այ սա (սիրտը) իր տխրադին և վեհ լուութեամբ իր գերեզմանաշունչ մեղեդին է շնչում ինձ և թօշնած կեանքի վշտոտ սօսափը ազդարարում։ աղեկտուր է զրա ձայնը, որը յիսուն տարւան փորձալից ընթացքում երբեք-երբեք չի խաբել ինձ։ Ուրեմն աւելորդ են ձեր խօսքերը, երբ սիրտս է խօսում ինձ հետ» ...

Նաւակները հասան Ափին խմբւած հօծ բազմութիւնը մոռացաւ անձանթին ու վրայ վազեց, և դիակ-դիակի ետևից դուրս բերւեցին շարեշար կանգնած նաւակներից և զետեղեցին ծովի ափին փխրուն աւազի վրայ։

Դեռ դուրս էին բերում երբ անձանթը մի մոլեգին թռիչքով առաջ անցաւ, խելակորոյս մօր



նման դէպի այս ու այն դիակը վազեց և յանկարծ
մի հզօր թնդիւնով և ահեղ ճիչով այնպէս դառնա-
գին որոտաց, որ կարծես արար-աշխարհը քանդուեց,
փուլ եկաւ և «Ներսէ ջան, լաօ» իմ աղնաւուր, իմ
արծիւ բալայ» գոռաց և դալկացած կիսակենդան ըն-
կաւ սպանւածի դիակի վրայ:

Դա Ներսէնց Սազէն էր







ՀՀ Ազգային գրադարան



NL0340472

34068

